

քերը և Թիւրքիան վերաշինելու ձգտող ուժերը բոլորովին ա՛յլ ծրագրով և ուղղութեամբ երևան եկած և գործած լինէին, քան ինչ որ նրանք արեցին: Եւ զրա համար էլ ասու՞մ ենք, այո՛, դեռ կար Հնարաւորութիւն, կար ճիշտց, և բաւականին ապահով ճիշտցներ, Թիւրքիան կորստից ազատելու, նրան դնելու այնպիսի ծի շաւղի ձէջ, որ կարողանար աստիճանաբար յառաջադիմել, հետզհետէ բարգաւաճել, յարատեւել իր գոյութիւնը՝ իբրև պետութիւն անհատ, որքան որ ծի պետութիւն կարող էր յարատեւ նկատուիլ իր ձէջ բովանդակուող ներքին բարբութիւնների տեսակէտից, և ապահովութիւն ունենար ղիճադրելու զուրսից եկած քայքայող, տապալել սպառնացող ոյժերին:

Թիւրքիան, անկասկած, կարող էր վերակենդանանալ, ապրիլ, զի զրա համար նա ունէր բաւականաչափ տարրեր, անհրաժեշտ գործօններ, որոնցից, սակայն, հարկաւոր էր ծիայն իմաստնորէն օգտուիլ և ընդհանուր գործունէութեան ու արդիւնաբերող շարժականութեան ձէջ դնել, որպէսզի այդ նպատակին հասնիլը պարզ երազատեսութիւնից զուտ իրականութիւն դառնար:

Գաղափարների այս ընթացքի ձէջ՝ առաջին հարցը որ ծագու՞մ է, այդ այն է՝ թէ արդեօք Թիւրքիայի բաղկացուցիչ ազգութիւնների ազգային գոյութեան և ինքնավարական ձգտումները տրամադճօրէն հակառակ էին Թիւրքիայի գոյութեան խարխիւների ամրապնդուելուն: Դժգոհ տարրերի, շարժականութեան ձէջ ծանող օտարացեղ ժողովրդների և թուրք պետութեան մնայուն շահերի ձէջ կա՞ր ծի այնպիսի էական ներհակութիւն, որ անկարելի լինէր նրանց ծի կերպ իրարու հետ հաշտեցնել՝ առանց ծի միւսին ջնջելու: Քաղաքական և ընկերային բարուքումներ պահանջող, կեանքի և գոյքի ապահովութիւն ուզող, ծարրկային տարրական իրաւունքների տէր լինել ցանկացող՝ նուաճուող, բայց զարթնող ազգութիւնները կարո՞ղ էին բնաջինջ լինելու չափ վնասակար տարր նկատուիլ վերակազմուելիք, երիտասարդանալիք Թիւրքիայի համար:

— Ո՛չ:

Եւ "Երիտասարդ"ները հէնց ամենախոշոր սխալը զրա ձեջը եղաւ:

Եթէ այդ հարցի նկատմամբ մեր օրերի "Երիտասարդներ"ը չզատապարտեցին իրենց նախորդները սխալները և նորից — մինչև այսօր էլ — տարակարծիքութեան ձեջ են ընկնում, զա միայն մի ուրիշ նոր ապացոյց է պարզ իրականութիւնը իրենց չճանաչելուն, եղածը գնահատել չկարողանալուն և ջախջախիչ մի փաստ՝ մերձաւոր ապագայի ճասին թափանցող սգուց իրենց բոլորովին զուրկ լինելուն:

Ուրիշ խնդիր:— Արդեօք դժգոհ, քաղաքական և ընկերային բարեկարգութիւններ ու իրենց ազգային անհատական գոյութիւնը երաշխաւորող՝ ինքնաւարական հաստատութիւններ պահանջող քրիստոնեայ ժողովուրդները, այսպէս ասած՝ փրջուած, ուռեցրած, արհեստական երևոյթներ, կամ քաղաքական գործիք էին որ և է մի պետութեան, որի պատմական ձգտումները, մնալուն շահերը հիմնովին հակառակ լինէին Թիւրքիայի գոյութեանը և վերածնութեանը, որպէսզի՝ այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով "Երիտասարդներ"ը կասկածոտ և բացարձակ թշնամական ընթացք բռնէին դէպի նրանց շարժումները և նրանց իղձերը արտայայտեցնող կուսակցութիւնները, ինչպէս որ արեցին:

— Երբէք:

Եթէ այդ ճասին որ և է կասկած ծագի, զա կլինի պատմական հողից զուրս մի անհիմն զրպարտութիւն, որի հեղինակները իրենց մերկապարանոց տղիտութիւնը միայն ցոյց կտան գոյութիւն ունեցող երևոյթները և նրանց յառաջացնող պատճառները բացատրելու, մեկնաբանելու ձեջ:

Թրքական լծի տակ հեծող ժողովրդների շարժումները անշեղ արդիւնարար էին նրանց զարգացման և պատմական կեանքին, նրանց քաղաքական, տնտեսական, ընկերային վիճակը շրջանակող անտանելի պայմաններին: Այդ շարժումների երկիւր՝ իբրև քաղաքական մի երևոյթ՝ բոլորովին բնական, անխուսափելի էր, նոյնքան բնական՝ որքան երկու հակառարր ամպերի ընդհարումը և զրա





Հետևանքը եղող կայծակի ու որոտուծի յառաջանալը քանի որ դժգոհ ազգերի ընդլիզուծը գոյութիւն ունեցող իրերի տրամագծական Հետևանքն էր, ապա չկար, չէր էլ կարող լինել երկրի երեսին և ո՛չ ձի բռնապետութիւն, որքան էլ որ նա ճ'նշիչ, զօրեղ և ճեծաքանակ տարրեր ունենար, որ կարող լինէր բողոքողներին ձայնը խեղդել՝ նրանց արտադրած յեղափոխական հոսանքի ամբիւրջ զուրս գալը արգելել: Այդպիսի ձի բան չէր կարող լինել, իսկ եթէ լինէր, գա էր որ Հակաբնական պիտի լինէր:

Ընդլիզուծ ձգտումներ արտայայտող ազգերի և նրանց ցանկութիւնների թարգմանը եղող յեղափոխականների զիրքը պարզ կերպով որոշող ա՛յնքան շատ նախանշաններ կային, որ երկմտութեան թեթև քօղ անգամ չէր կարող լինել՝ նրանց պահանջի հիմունքների արդարութեան և իրաւայիտութեան մասին. շարժումների մէջ մտնող ժողովուրդները և նրանց արտադրած պայքարող մարմինները, սկզբից ի վեր, ամենայն քաջութեամբ հրապարակ էին դրել իրենց բողոքի ցանկը՝ գոյութիւն ունեցող պետական-բռնապետական չարիքների դէմ, և մատնանիշել նրանց փոխարինող իրական դարձանները, ծրագրերը՝ որոնք իրենց ամբողջութեամբ, իրենց էութեամբ աւելի շինիչ, զրական կողմեր էին ներկայացնում, նոյն իսկ թրքական շահերի տեսակէտից, քան քանդիչ, բացասական, եթէ Օսմանեան ղեկավարիչ ոչ ժերը, ինչպէս և "Երիտասարդ" ները՝ ձի փոքր աւելի լայն խորհած լինէին և փոխանակ ոչ ժի իրաւունքի, արդարութեան իրաւունքը ճանաչած լինէին, — ինչպէս որ արեւ էին նոյն կացութեան մէջ գտնուող ուրիշ պետութիւնների մէջ գործող ոչ ժերը:

Անշուշտ կարելի էր, գուցէ, զարթնող ժողովուրդների փափաքները ամփոփող ճրագրերի զանազան կէտերի, հեռաւոր շրջանների համար մտածմունքներ պարունակող խնդիրների մասին վիճել, հակառակել, — այդ կարելի էր և դա ո՛չ ձի լուրջ վնաս կարող էր բերել ղեպի ընդհանուր խնդիրները, ընդհանուր գործը. ինչ որ վերաբերում էր բոլոր տարրերի համերաշխութեան և համագործակցութեանը, պայծանով սակայն որ ձին միւսին պատուանդան դառնալու

սխտեճը չընդունուէր: Եւ այս էլ ասենք, անձիջապէս՝ որ տարօրինակ ոչինչ չկայ. ամէն ընկճուած ազգ, ամէն Հաւաքական ճարձին, ամէն պայքարող կազմակերպութիւն, ճիշտ՝ իր կենսականութեան և գոյութեան իրաւունքի գրաւականներից առաջինն է Համարել ունենալ և՛ իր շա՛տ հեռաւոր նպատակները, իր երազները ի՛սկ, որոնք եղել են իրենց ձղիչ խրախոյսը, զրդող ազդակը, ոգևորող, թուէք տուող իղէալը: Դա եղած է ամէն տեղ, ամէն ժամանակ, անհրաժեշտ էր որ նոյնը լինէր և՛ Թիւրքիայի բաղկացուցիչ ճասերը կազմող ազգութիւնների ձեջ:

Բայց խնդիրն այն է՝ թէ տրանջող, բողոքող, ապատաճբող ազգերի, նրանց ճարանչող ճարձիւնների արտայայտած նախնական արդար իղձերը, առաջադրած անձիջական նպատակները երբէք չէին հակառակուծ Թիւրքիայի բուն մնայուն շահերին՝ իբրև պետութեան: Նրանց սկզբնական պահանջները և ո՛չ ճի միտում ունէին թուլացնել, ջլատել, քայքայել և վերջապէս կործանել Թիւրքիան՝ զորեւոյժ և՛ թուրք ժողովուրդը: Ո՛չ, այդպիսի բան չկար. յեղափոխական շարժումները զիճող, այսօր իրենց անկախութիւնը և կիսանկախութիւնը ձեռք բերող ժողովրդների պատճառովն էր այնտեղ է հաստատելու համար, որ Թիւրքիան բոլորովին ուրիշ վիճակ և բախտ կունենար, եթէ նա ունեցած լինէր ա՛յնպիսի բանիրուն պետական անձնաւորութիւններ, որոնք ընթացած լինէին ո՛չ թէ ասիական, այլ եւրոպական քաղաքակրթութեան տուած ճանապարհներովը և հիմունքներովը՝ ինչ որ վերաբերում է բաղկացուցիչ այլատարր ազգութիւններից կազմուած ճի պետութեան վերաշինութեանը:

Բողոքող ժողովրդների բարենորոգչական համեստ փափաքները, նրանց պահանջած քաղաքական, տնտեսական, ընկերային՝ իրենց զարգացման համապատասխան՝ հաստատութիւնները իրենց ամբողջութեամբ ո՛չ թէ Թիւրքիան կործանելու, քայքայելու, այլ վերաշինելու առատ սաղմեր ունէին, եթէ ճիւղն « Երիտասարդ »ները այդ հանգամանքից, իրերի առաջ բերած այդ ն ուր զրութիւնից և հոսանքից խելօք կերպով օգտուել զիտեանային:

Եթէ « Երիտասարդ Թուրքեր »ը ցանկանում էին իրենց



ընդհանուր հայրենիքի իրական վերածնութեանը, — բաղկացուցիչ ազգութիւնների ծանաւոր ցանկութիւնները զրան ներհակ չէին: Եթէ իրենք փափաքում էին ներքնապէս խաղաղեցնել, ամրապնդել Թիւրքիան, տալ նրան գոյութեան ամուր նեցուկներ, — բողոքող ժողովուրդները զրան ընդդէմ չէին: Եւ եթէ իրենք ընդհանուր ծիտում ունէին ապահովել իրենց երկիրը օտար պետութիւնների կլանող ակտրժակից և նրա յարատեւութեան պայմանները արտաքին հակամարտ ազդեցութիւնների ու ճրջումների երերուն ակբքներից հանելով ներքին բաղկացուցիչ տարրերի գօրութեան վրայ դնել, որպէսզի այդպիսով ապրելու և յառաջադիմելու երաշխաւորութիւններ ունենար, — տառապող, ճարդկային և ազգային գոյութեան անհրաժեշտ իրաւունքներ պահանջող և այնպէս ժողովուրդները զրան ո՛չ ճիշին հակառակ չէին, այլ իրենց շարժումներով, իրենց անմիջական ձգտումներով՝ նրանք առաջինն էին բերում ընդհանուր վերաշինութեան անկիւնաքարը իրենց հայրենիքներում, որի անունով ճիշին նրանք իրաւունք և պարտականութիւն ունէին խօսելու, ապահանջներ յայտնելու և, ի հարկին, զէնք վերցնելու:

Իրապէս բարեփոխուելիք Թիւրքիային՝ իրենց վիճակին բարեփոխութիւն պահանջող՝ նուաճուող երկիրները ճահացու հակառակորդ չէին, ճի փոքր հեռատես աչքի համար: Հարկաւոր էր ճիշին ամէն ճէկ երկրի տեղական ապահանջներին համեմատ բարեփոխութիւնների սխտէճ ընդունել և իրականացնել աշխատել, — ինչ որ չճտաճեց անել "Երիտասարդ Թիւրքիան":

Վեր առնելով կողճերի ընդհանուր իղճերի ամբողջութիւնը, ուղղութիւնը, նրանց տաճաճ գաղափարների, ճրագրերի նուաղագոյնը՝ անմիջականը, բաղկացուցիչ ազգութիւնների Երիտասարդներին և "Երիտասարդ Թուրքեր" ի ընդհանուր ձգտումների ճիշեւ — ընդունելով որ սրանք անկեղճ են — էական, գլխաւոր ճիտարբերութիւն եթէ կայ, այդ այն է՝ թէ ի՛նչ ճիշեցնեցրով, ի՛նչ ուղեգճերով, ի՛նչ պէս և ի՛նչ հաստատութիւններով կարելի էր՝ համեւ այն ճօտաւոր նպատակներին, որոնց իրագորճուճից կարող լինէին օգ-

առեղ թէ՛ Հոյ, թէ՛ Արաբ, թէ՛ Ալբանացի, թէ՛ Մակեդոնական  
ազգու թիւնները և թէ ընդհանուր Թիւրքիան: Ինչպէս  
անել՝ որ ամէն ինչ քանդող, կործանող Բռնակալութեան  
դէմ ճղած պայքարի արդիւնքից բաւականութիւն ստանային  
թէ՛ "Երիտասարդ Հայեր"ը, թէ՛ "Երիտասարդ Արաբներ"ը,  
թէ՛ "Երիտասարդ Մակեդոնացի"ները, և այլն, և թէ՛ "Երի-  
տասարդ Թուրքեր"ը, եթէ սրանք ձեռք ձեռքի տային ձի օր:

Ահա պարզ, որոշ, պատճական նշանակութիւն ունեցող  
հարցը, որի վճռելուն համար հարկաւոր էին, և հարկաւոր  
են, ո՛չ ճիւղն անկեղծ, այլև կարող, ստեղծող ոյժեր:

Դրուած հարցին անձիջապէս պատասխանելուց առաջ՝ նորից  
ճատնանիշ ենք անուձ այն փաստը, առաջին՝ որ "Երի-  
տասարդ Թուրքեր"ի պաշտպանած գաղափարները և այդ գա-  
ղափարներին հասնելու համար դորձ դրուած ձիջոյցները ճինջև  
ցարդ զրական և ո՛չ ճի արդիւնք են առաջ բերել՝ Թիւր-  
քիայի թէ՛ ներքին և թէ՛ արտաքին խնդիրների տեսակէտից:  
Երկրորդ՝ Թիւրքիան այսօր էլ նոյն ընդարձացած, անդամա-  
լուծուած, նոյն անկայունութիւն ներկայացնող պետութիւնն  
է, ինչ որ էր դեռ շա՛տ զարեւ առաջ: Այժմն էլ Օսման-  
եան պետութեան ձեջ լիածաւալ գոյութիւն ունեն նո՛յն  
քայքայիչ տարրերը, յուզուծ են նո՛յն խնդիրները և նո՛յն  
պաքներն են ուղղուած դէպի նրա սիրտը ու իր վերջնական  
տապալուծը անխուսափելի դարձնուծ — եթէ եղածը շարու-  
նակուի — ինչ որ կային դեռ "Երիտասարդ"ները ասպարէզ  
չճտած: Այնպէս որ՝ եթէ "Մերունիներ"ը քանդեցին, կոր-  
ճանեցին, ճահուան դուռը հասցրին, "Երիտասարդ"ներն  
էլ "Հիւանդ Մարդ"ը բուժել, ելեկորացնել, իրեն սեպհա-  
կան ոտքերի վրայ դնել չկարողացան: Պատճութեան անողոք  
դասը այնտեղ է, նա կենդանի վկայ է: — Ի հարկէ, այդ  
բոլորը ճիւղն և ճիւղն նրա համար, որ Ռէշիդը և իր բո-  
լոր յաջորդները օսմանեան պետութիւնը կազմող տարրերը  
ճանաչելու, գնահատելու իրական կորովճատութիւնը չունեցան,  
չկարողացան կանոնաւոր, կազմակերպուած պայքարող ճարճին  
կազմել և իրենց ընդհանուր երկրի ու նրա տարածութեան վրայ  
բնակած ժողովրդների իսկական պահանջներն ին հա-  
ճապատասխանն պատակայարճար քաղաքա-



կան հաստատութիւններ ձեռք բերելուն ձգտել : Եթէ "Երիտասարդ"ները եղածները, գոյութիւն ունեցող ամէն դժուարութիւնների միակ պատասխանատուն համարում էին "Մերունի"ներին, ապա ո՛չ նուազ ճեղադրանքի արժանի են և՛ իրենք, զի ամէն մարտնչող մարմին, ամէն պայքարող կաղճակերպութիւն իր առանձին պատասխանատուութիւնն ունի՝ ամէն տեղ և ամէն ժամանակ :

Եղաւ այն, ինչ որ պիտի լինէր, զի դա անխուռտափելի էր : Եւ ի՞նչ էր եղած անխուռտափելին, — այն՝ որ Օսմանեան պատմութիւնը ստեղծել, տուել էր անամբողջացման (désintégration) պատճառներ և իրողութիւններ : Բազկացուցիչ ազգութիւնները բնական ուրիշ ճանապարհ չգտնելով՝ ճիշտ ձգտել էին բաժանուել, անջատուել, ազատուել Օսմանեան բռնապետութիւնից : Եթէ "Մերունի"ները դրա համար ճեղադրում էին, "Երիտասարդ"ներն էլ գործեցին պատմական այն խոշոր սխալը, որ իրենք էլ չուզեցին ճանաչել նուաճուող, բայց դարձնող ազգութիւնների ազգային անհատական գոյութեան իրաւունքը և չձգտեցին նրանց պահանջներին բաւարարութիւն տալու նպատակ ունեցող քաղաքական հաստատութիւններով օժտել ընդհանուր Թիւրքիան. ուստի թէ՛ "Երիտասարդ"ները իրենք անյաջողութեան բաղխեցան և թէ պայքարող ազգութիւնները նրանցից ո՛չինչ ակնկալելիք չունենալով՝ շարունակեցին իրենց նախկին ուղեգծերովը ընթանալ : Պատմական այդ կարևոր սխալը աւելի կարկառուն կերպով դուրս ցայտեցնելու համար՝ անցնենք բուն խնդրին և հարցն՝ այսպէս դնենք :

— Թէ որ ո՞նք են այն հաստատութիւնները, այն միջոցները, որոնք կարող են բարեկարգել թէ՛ ընդհանուր Թիւրքիան և թէ՛ անմիջական կերպով՝ ճանաչելի գոհացումն տալ պայքարող Հայաստանին, Մակեդոնիային, Արաբիային, Ալբանիային, և այլն : — Նախ քան այդ հարցերին անցնելը՝ հարկաւոր է քննութեան առնել ընդհանուր գործողութեան թատր եղող միջավայրը և հարցնել թէ ի՞նչ է Թիւրքիան :

**ԹԻԻՐՔԻԱՅԻ ԻՐԱՎԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱԶՄԸ**

Ի՞նչ է եղած անցեալի մէջ և ի՞նչ է այժմս Թիւրքիայի ընդհանուր կացութիւնը և նրա կազմը՝ բաղկացութիւնը:

— Իր բաղկացութեամբ, կազմի տեսակէտից՝ Թիւրքիան տարասեռ (hétérogène) ժողովրդներէց բաղկացած մի պետութիւն է, որի այլազան տարրերի մէջ հաստատուն, տևական և ո՛չ մի կապ կայ՝ բացի իշխող բռնապետութեան վարչական և օրէնսդրական գրութիւնից յառաջացած փոխադարձ յարաբերութիւնները, որոնք աւելի վանիչ, անջատող բնաւորութիւն ունին, քան միացնող, մօտեցնող, համերաշխական զգացմունքներ ստեղծող: Հակառակ իրենց կամքի՝ մի բռնաւորի միահեծանութեան տակն են մտած տարբեր ցեղեր, — ճարդկանց այնպիսի տեսակներ, որոնք ունեն հաստատուն և փոխանցելի բնորոշ գծեր, և հետևաբար այլատեռ համախընժումների անջատումը բնական է, ծնունդ անցեալի և ո՛չ թէ արհեստական: Ուրեմն, իր ամբողջութեամբ՝ օսմանեան կայսրութիւնը իրարու մօտ դրուած մի հաւաքածու, մի շեղջակոյտ է գանազան ազգութիւնների, որոնցից իւրաքանչիւրը ունի իր սեպհական կեանքը, տարբեր անցեալը, լեզուն, կաշկանդող սովորութիւնները և այն բոլոր ազգակները, որոնք մի համախմբութեան օղակող գծերն են կազմում՝ միւսներէց տարբերութեամբ: Այդ բոլորի վրայ բարդուած է և՛ այն հանգամանքը, որ գոյութիւն ունեցող ազգութիւնները կուտուրայի, քաղաքակրթութեան տարբեր աստիճանների վրայ են գտնուած, — այն՝ ինչ որ մէկի համար կենսական, իրական պահանջ է, միւսի համար գոյութիւն չունի:

Ու վերջապէս, պարզ իրողութիւն է և՛ այն, որ այդ չճշտուելիք, հակամարտ ձգտումներ ունեցող տարրերը իրարից բաժանուած են և՛ աշխարհագրական, ժողովրդագրական տեսակէտով ու անջատ՝ բաւականին հո՞ծ միութիւններ են կազմում: — Ահա թէ ինչո՛ւ օսմանեան պետութեան մէջ դարերից ի վեր յուզուած, յառաջ են գալիս ա՛յն բոլոր խրնդիրները, որոնք տ ա ր ա ս ե ո ժողովրդներից բաղկացած մի պետութեան անբաժան մասն են կազմում: Քաղաքական հա-



ճանճան դրութիւն ունեցող ամէն պետութիւն, թէ՛ անցեալի և թէ՛ ներկայի ճէջ՝ շարունակ ենթակայ է եղել այն բոլոր ներքին խռովութիւններին և յուզումներին, որոնք երէկ և այսօր գոյութիւն ունեն թիւրքիայում: Այն՝ ինչ որ կատարուած է այժմս, — անխուսափելի էր:

Ճշմարիտ է, Օսմանցիւն իր զէնքին կրթնած, ամենազօրաւորի իրաւունքը իրեն սկզբունք արած՝ շատ անգամ յաջողել է այդ օտարասեռ ժողովրդներին հնազանդութեան, հպատակութեան շաւղի մէջ պահել, բայց միայն այն հանգամանքը՝ որ նա իր պատմական կեանքի մէջ անկարող է եղել այդ բոլորին տարրալուծել, նրանցից մի ամբողջ ութիւն կազմել, — այդ ցոյց է տալիս որ իր զէնքը ամէն ինչ չի եղել և նրանով ամէն իր ուզածը չէր կարող կարգադրել. արդ՝ բացարձակ անհրաժեշտութիւն է, որ գոյութիւն ունեցող ազգերի իղձերը, ձգտումները հաշուի առնուին, եթէ ցանկութիւն կայ որ թիւրքիան իր գոյութիւնը շարունակի, և ինքն իր ձեռքով իր տապալումը չարագայնի:

Ազգերի պատմութիւնը անհերքելի շատ փաստեր ունի իր մէջ բովանդակած այն ճասին՝ թէ ինչպէս տարասեռ տարրերից կազմուած մի պետութիւն անկարելի է ներքին խաղաղութեան մէջ պահել՝ միանման, համատեղ հաստատութիւններ պարտաւորեցուցիչ դարձնելով բազկացուցիչ բոլոր ազգերի համար, նա ճանաչանդ երբ տիրող տարրը եղել է թոյլ, ժամանակի յառաջադիմական հոսանքից յետ մնացած: Եթէ բռնակալ տիրողի սուրը չի կարողացել այդ դէպքում բացարձակ լուծիւնը, անձայն հնազանդութիւնը ձշանջենաւորել, — նրա զրծած միակերպ օրէնքները, Քաղաքական միանման Հաստատութիւններն էլ անզօր են եղել այնպան ժողովրդների մէջ ներքին խաղաղութիւնը յարատև և բացարձակ պայման դարձնել:

Եթէ իրերի բնաւորութիւնն է որ տալիս է օրէնքներ, ապա նոյն այդ իրերի մնացուն պայմաններն էլ տալիս են միջոցներ մի երկիր, մի պետութիւն կառավարելու, ամբապնդելու:

Տարասեռ ժողովուրդներ բովանդակող պետութիւնների տիրաբար կարող է համարուել Աւստրիան : Այդ երկիրն էլ ունեցել է իր ծանր ճգնաժամերը, երբ իր վերջնական անկուծը անխուսափելի է նկատուել, և այդ կասկածը կայ ճինջև այժմ : Արդ, այդ բազմաբեզու պետութեան թաղակիրների, պետական անձերի հոգացողութեան գլխաւոր առարկան է եղել թէ ի՞նչպիսի օրէնքներով, ի՞նչ հաստատութիւններով կառավարել այդ բազմացեղ ազգերը, որպէսզի ներքին խաղաղութեան հետ մէկտեղ պետական ճի ու թիւնը չվտանգուէր : Գրուած հարցին պատասխանել է, միշտ, երկու որոշ քաղաքականութիւն, որ Աւստրիայի ներքին կեանքի տիրապետող ուղեգիծն է եղել :

Եղել են կառավարիչներ, քաղաքագէտ անձեր, որոնք այդ պետութեան յարատւութեան և ապահովութեան պայմաններն են համարել՝ տալ ամբողջ երկրին միակերպ օրէնքադրական հաստատութիւններ, համանման վարչական կարգ ու կանոններ, առանց ամենափոքր չափով ուշադրութեան առնելու բաղկացուցիչ ազգութիւնների պատմական իրաւունքները և տեղական պահանջները : Աճէն ինչ հարթող, հաւասարեցնող այդ քաղաքականութեան ծարմնացումն են եղել Յոսէֆ Բ.-ը և Մետտերնիխը : Երկուսն էլ խելօք, հանճարեղ մարդիկ. բայց որովհետեւ իրենց հետեւած քաղաքականութիւնը գոյութիւն ունեցող իրերի պահանջին տրամագծօրէն հակառակ էր, ուստի երկուսն էլ, զանազան ժամանակներում, գերեզմանի դուռը հասցրին Աւստրիան : Այսպէս, մի անգամ էլ ցոյց տալով՝ որ բնազանցական մտածունքները, a priori յղացումները, ինչքան էլ որ լաւ կերպով արտայայտուին և կորովամիտ թարգմաններ ունենան,— գեւ հերիք չեն, իրենց զատ անհատականութիւնը ունեցող ժողովուրդներին մի կաղապարի մէջ ձուլելու, նրանց՝ պետական մի ընդհանուր յայտարարի վերածելու :

Սակայն գտնուել են պետական գործերը վարող և՛ այնպիսի անհատներ, որոնք առաջին քաղաքականութեան ճիշտ հակառակն են գնացել : — Տալ այլազան ժողովուրդներին ո՛չ թէ մի օրինակ, այլ տարասեռ, տեղական



պ ա հ ա ն ջ ն եր ի ն հ ա մ ե ճ ա տ' տ եղ ա կ ա ն հ ա ս-  
տ ա տ ու թ իւ լ ն ն եր : Այսինքն՝ տարբեր երկիրների  
պատճառքադաքական անհատականութիւնները աչքի առաջ  
ունենալով՝ այն տեսակ հաստատութիւններով օժտել երկիրը,  
որ ճի կողմից իւրաքանչիւր ազգութիւն իր աւուրնք և  
ճիշոյ ունենար իր ազգային անհատականութիւ-  
նը պահպանելու և ճիւս կողմից՝ տարբեր ճիւթիւններ  
կազմող այդ երկիրները՝ տեղական հաստատութիւնների  
ճիշոցով՝ պետական ճիւսցուցիչ հաստատու-  
թիւններով իրարու հետ կապուէին : Առաջին նպա-  
տակին հասնելու հնարաւորութիւնը համարեցին Տեղա-  
կան Օրէնսդրական Ժողովները (Landtag, Diète), իսկ երկ-  
րորդին՝ Բնդհանուր Պատգամաւորական Ժողովը (Reichsrath) :  
Ժողովրդի ընտրած ներկայացուցիչներից կազմուած Land-  
tag-ը կարողանուած էր, յայտնի աստիճան, ինքնավար կեր-  
պով անօրինել տեղական թէ՛ օրէնսդրական և թէ՛ վար-  
չական գործերը . իսկ Reichsrath-ը, առաջ Landtag-նե-  
րից որոշեալ թուով ուղարկուած ներկայացուցիչների և  
այժմս ընդհանուր, ուղղակի գաղտնի և հաւասար քուէար-  
կութեամբ ընտրուած Պատգամաւորների ճիշոցով, իբրև  
տարբեր ճիւթիւնների Կեդրոնական Մարմին, ներկայացնու-  
են Պետական ամբողջութիւնը, ճիւթիւնը :

Աւստրիային անկուճից ազատող և նրան համեմատական  
կենսունակութիւն տուողը եղել է այս երկրորդ քաղաքակա-  
նութիւնը, որի գլխաւոր արտայայտիչներն են եղել Շմեր-  
լինգը և Բէտտը՝ վերջինս ճանաւորապէս հունգարիայի  
նկատմամբ — որ թէև ճի փոքր տարբեր ձևով կապեր ունի  
Աւստրիայի հետ, բայց սկզբունքը նորից նոյնն է :

Եթէ այս երկրորդ քաղաքականութիւնը և նրանից յառա-  
ջացած հաստատութիւնները չլինէին — Աւստրիան վաղուց  
ջնջուած կլինէր եւրոպական քարտէզից : Եւ եթէ ճի օր այդ  
պետութիւնը ընկնի, — լրիւ և ճինչև վերջ այդ սխտեճին  
հաւատարիմ չմնալը պիտի լինի :

Ահա՛ւասիկ, ճօտաւորապէս, ներքին այն քաղաքականու-  
թիւնը՝ որ զեւ շա՛տ երկար ժամանակներ առաջ իրենց  
զեկավարիչ սկզբունքը արած պիտի լինէին և՛ թրքական

պետական անձերը ընդհանրապէս, իսկ « Երիտասարդ »ները՝ ծանաւորապէս, եթէ ծի բիչ խորաթափանց ծխոք ունենային իրականութիւնը ճանաչելու և ողջմտօրէն դիտարկելու :

Մենք զիտմամբ խոյս տուեցինք օրինակ բերելու տարասեռ ազգութիւններից կազմուած այն պետութեանց հաստատութիւնները, որոնց ժողովուրդները յառաջադիմութեան, քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանների վրայ են կանգնած, քան աւստրիականները:— Զուիցերլան, Միացեալ-Նահանգները, Անգլիական գաղթավայրերը և նրանց ընդդրկած քաղաքական կազմը կարող է ամենահամոզիչ փաստը և օրինակը լինել՝ զանազան բաղկացուցիչ տարրերից և այլացեղ ժողովրդներից կազմուած պետութիւնների վերանորոգուելուն և երիտասարդանալուն:

Ռուսական բաժնի՝ ինքնավար Լեհաստանի խորտակելը Ռուսիային շատ ճեճ ամբապնդում չբերեց: Ֆինլանդական ինքնավարութիւնը ոչնչացնել ձգտող ցարիզմը ինքը պարտուեց և ստիպուեցաւ խոստովանիլ, որ ծի պետութեան ճեճ ամփոփուող տարասեռ ժողովրդներին ծի ազգութեան, ծի համասեռ ամբողջութեան ենթարկելու քաղաքականութիւնը իր այն յաջողութեան վերջին խօսքն ասեւ էր՝ քաղաքակրթութեան ներկայ զարգացման աստիճանին ծեճ:

Պրուսական quasi սահմանադրական ծիպետութիւնը՝ հակառակ իր օտարակուլ քաղաքականութեանը և ձեռք առած օրէնսդրական ամէն տեսակ բացառիկ ծիջոցներին, անկարող եղաւ Պոզնանի ծի բուռն լեհ ժողովրդին արձատախիլ անելու՝ նրան ապազգայնացնելու, նոյնացնելու (assimiler), գերմանացնելու:

Սակայն իրողութիւն է, որ ծինչև երեսնական թուականները՝ թրքական պետութիւնը անկճան այնչափ ակտանշաններ էր ցոյց տուել, որ փոքր ի շատէ կորովամիտ ծի բարենորոգչի համար դժուար չպիտի լինէր խուզարկել, գտնել այն կրուանները, որոնց վրայ ծիայն յենուելով Օսմանեան բաղձալեզու կայսրութիւնը կարող պիտի լինէր թէ՛ ներքին խաղաղութիւն վայելել և թէ՛ իր գոյութիւնը ապահովել արտաքին հարուածներից: Եթէ այդ ժամանակուան թուրք երի-



տասարդութիւնը ա՛յնքան կարճատես գտնուեց՝ որ  
այլատես տարրերի ընդհանուր կոտորածը,  
ածբողջական կրօնափոխութիւնը ամենա-  
էական պայճաններէց մէկը դատեց Թիւրքիայի ապագայ  
ապահովութեան տեսակէտից, դժբախտաբար յիմնական,  
վաթանական թուականների "հետեակ" բարենորոգիչներն էլ  
տարտամ ձգտումներ յայտնելուց ձիւս կողմը չանցան. իսկ  
եօթանասնական՝ Միդհատեան շրջանի "մեծածողներ"ը բռնե-  
ցին մի կեղծաւոր, նենգածիտ դրութիւն, ճիշտ դուգահե-  
ռականը այն "Մերունիներ"ի, որոնք գոյութիւն ունեցող  
գժուարութիւնների ժամանակաւոր հեռացումը, յապաղումը՝  
լուծում էին համարում: Հետեաբար, Միդհատեան շրջանից  
մնացած բեկորները այժմ բռնուած են մի անողբ երկառածի  
մէջ,—կա՛մ հետեւել իրենց նախորդներին և հանդիսատես  
լինել Թիւրքիայի գլղղալից կործանմանը, կա՛մ թողնել  
իրենց պատմականօրէն արդէն դատապարտուած սկզբունքները  
և գծել նո՛ր ուղի, նո՛ր միջոցներ ու աջակիտով  
իրենց երկրի ընդհանուր վերաշինութեան գործը հաստատուն  
հիմունքների վրայ դնել, — ի հարկէ, եթէ իրօք ցանկանում  
են մի բան, մի գործ առաջ բերել, և ո՛չ թէ թղթային  
ցոյցերով խաղի բռնուել: Մանաւանդ որ ուղղամտօրէն  
պայքարել ուզող՝ Թիւրքիայի իրական վերածնութեանը նա-  
խանձախնդիր թուրք անհատների գործը այժմ և՛ս աւելի  
զիրացած է, բաղկացուցիչ ազգութիւնների ճարտնչող  
ճարմինների երևան գալովը, որոնք՝ իբրև կուռղ ոյժ, իրենց  
սլաքները ուղղած են դէպի նո՛յն բռնապետութիւնը, նո՛յն  
աւերող, քանդող Բնդհանուր Թշնամին, որի quasi-հա-  
կառակորդն են համարում և՛ իրենք:

Եւ մենք իրերի անխուսափելի ընթացքը "Երիտասարդ"-  
ներին մի անգամ էլ յիշեցնելու համար էր՝ որ բաւականա-  
ցանք միայն մասնանիշել բարենորոգումների այն ընդհանուր  
ուղղութիւնը, ողին, որ կարող պիտի լինէին տեղ գտնել,  
անհրաժեշտաբար, այն "Երիտասարդ Թուրքեր"ի ծրագրե-  
րում, որոնք դեռ կամէութիւն են ցոյց տալիս զանազան  
բարենորոգումներով յետս կասեցնել Թիւրքեան իր անխու-

սափելի անկուսից՝ եթէ իրերի առաջուան դրութիւնը շարունակուի, յայտնի բան է :

Մի կողմ թողնելով ձեռք երկիրները՝ դառնանք այժմ Հայաստանին :

Այստեղ խնդիրը աւելի պարզ, որոշ և շօշափելի ձևունի առած :

IX.

**ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԹԻՒՐԻԱ**

Հայաստանը իր աշխարհագրական դիրքով Թուրք պետական, կայսերական բերդի դուռն է կազմում: Հայաստանը ունենալով Օսմանյի բերդի բանալին իր ձեռքն ունի, իսկ առանց նրան՝ նա ո՛չ ծխախոտի ամբողջ տէրը չէ, այլ այդ ամբողջ գոյութիւն ի՛սկ ունենալ չի կարող, ինչքան էլ որ նա փոքր ծառայի վերածուէր: — Կ. Պօլսի փականքը Հայկական բարձունքների վրայ պիտի որոնել:

Հայ ժողովուրդը Օսմանեան պետութեան կենսաբեր ջիւղը, նեարդն է կազմում: Առանց այդ աշխատասէր, արտադրող, ստեղծող ժողովրդի, Թուրք պետութիւնը իր ունեցած ձեռք տարբերով կարող է ծի խառնիճադանճ, վաչկատուն ամբոխ կազմել, ցրուած աւելի կամ նուազ ընդարձակ ծի տարածութեան վրայ, — բայց ո՛չ թէ ծի կանոն աւուր, կազմակերպութեամբ պետութիւն՝ նոր ծառայութիւն: — Հայը Թուրք պետութեան պահպանող պատուանդանը, արիւնատար երակն է:

Եթէ անյիճելի է որ Հայաստանը Թուրքիայի շտեմարանն է, ապա նոյնքան անտարակուսելի է, որ Հայ ժողովուրդն էլ այդ շտեմարանը լցնողն է:

Շատերի կողմից Օսմանյին "ընտիր զինուորների ծի կոճի" է նկատուել: Կայ պատմութիւն՝ Հայը զինուորական այդ յատկութեան հետ երևան է բերել և՛ ծի ուրիշ աւելին՝ — շինող, կազմակերպող, ստեղծող: Եւ ծինչդեռ Օսմանյին իր պատերազմական խանդը դուրս թափելուց յետոյ լճացել, փայտացել, կանգ է առել, տիրապետել՝ առանց կանոնաւորել կարողանալու, — Հայը, եթէ յաղթող



ներդաշնակել է, եթէ յաղթուող՝ իր վերքն է գոցել, իր ոյժերը կազդուրել և շարունակ, միշտ յառաջադիմել: Եւ այսօր Հայը տէր է մի կուլտուրայի, բովանդակող է քաղաքակրթական այնպիսի տարրերի, որոնցից այժմս բոլորովին զուրկ է Օսմանցին՝ ընդհանուր զանգուածային տեսակէտից:

Եթէ եղաւ մի Բէօստ, որ փշրուած, խորտակուած Աստորիայի Համեմատական կայունութիւնը հունդարական ժողովրդի ազատասիրական արդար ձգտումներին բաւականութիւն տալու ճէջ տեսաւ, — դժբախտաբար՝ Թուրքը իր պատճական երկունքի ճէջ մի Բէօստ արտադրելու անընդունակ եղաւ: Բայց Հայը իր հատու զէնքի, իր կորովի բազկի հետ միասին Օսմանեան պետական մեքենան վարող, յառաջ մղող նիւթն էլ պիտի տար!: Եւ Օսմանցին՝ «Մերունի» կամ «Երիտասարդ» անհեռատես Օսմանցին՝ ժամանակաւոր պտուղը վայելելու համար, աշխատեց ծառը արծատաքի տապալել. ճողանալով սակայն, որ այդպիսով իր ինքնասպանութեան գործիները իր ձեռքովն էր պատրաստում: Իր ամրապնդման, իր ինքնագոյութեան շահը միայն առաջնորդ բռներով՝ Թուրքը, եթէ մի քիչ թափանցող խեղճ ունենար, դեռ շատ վաղուց, ինքնաբերաբար, պիտի ջանար Հային գոհացնել, նրան յառաջադիմութեան ճանաւոր պայմաններ տալ, և այդ՝ նոյն իր շահի, իր պապհովութեան տեսակէտից: Իսկ փոխանակ դրան՝ նա Հայերիս նկատմամբ սկզբում հետևեց քանդող, ստրկացնող քաղաքականութեան և վերջն էլ՝ բացարձակ ջնջման:

Այսպէս, դարերից ի վեր Հայը իր Մայր-երկրի ճէջ կրեց ամէն տեսակ հալածանք, ենթարկուեց ամէն կարգի հարստահարութեանց. կանխամտածութեամբ քաղաքական և ընկերային ամենաստորագոյն վիճակի ճէջ դրուեց և որոշուեց գործօն ոյժեր էլ՝ նրան յարատևօրէն այդ դրութեան ճէջ պահելու, — բայց այդ բոլորի միջից անցնելով՝ Հայը ընդունակ և կարող եղաւ մի կողմից իր վրայ ծանրացող, իրեն կաշկանդող, քայքայել, սնչացնել ուզող տարրերին դէմ դնելու և միւս կողմից էլ՝ Մայր-Հայրենիքի ճէջ իր կենսականութիւնը պահպանելով՝ նոր կեանքի ձգտելու: — Տառապանքի, երկունքի այդ շատ երկար տարիներում՝ Հայը

երևեց ձի կողմից իր ունեցածը յաճառօրէն պահպանող, իսկ չունեցածի, կորցրածի համար՝ ձգտող, ճարտանչող: Եւ այսօր, ջնայելով իր զլխով անցած հին ու նոր ամէն աղէտներին, նա դեռ ապրում է հոճբաղձ ու թեւածբ աջն երկրի ճէջ, որին համաշխարհային պատժութիւնը ճանաչել է Հայաստան անունով:

Աշխարհակալական իրաւունքով Թուրքը այդ երկիրն էլ իր կայսրութեան ձի ճառն է դարձրել: Բայց ձի այնպիսի ճառը, որ ձիւս ճասերից տարբերուծ, անջատուծ է թէ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ տեսակէտով և թէ ՅԵՂԱԳՐԱԿԱՆ, ու կաղճուծ ձի անջատ ճոյշլ, ձի ընդարձակ տարասեռ ճարճնի՝ անյարակից կտորը: Հայ ազգի ՊԱՏՄԱՒԱԳԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ այդ երկրի վրայ որ և է վիճաբանութիւնից վեր է և ամենափոքր առարկութեան ի՛սկ տեղիք չի կարող տալ, զի այդ իրաւունքը ճանչցուել և յարգուել է հազարաւոր տարիներից ի վեր: — Այն ժամանակ՝ երբ Օսմանյիւն դոյութիւն ի՛սկ չունէր, երբ նա իր ամբոխային կաղճակերպութեան ճէջ դեռ չէր ճտած, ինչպէս և յետոյ՝ այդ բոլոր ժամանակներու՝ ՀԱՅԻ ՊԱՏՄԱՒԱԳԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ կար և գործուծ էր այդ երկրի ճէջ: Չնայելով իր քաղաքական անկճանր՝ Հայը իր Հայրենիքի ճէջ դարերի ընթացքուծ շեղջել, ճթերել է և իր հարազատ զաւակների արիւնով ոռոգել, ուռճացրել է ա՛յնքան շատ անանցանելի կոթողներ, որ ՀԱՅԻ ՊԱՏՄԱՒԱԳԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ դեռ շա՛տ ու շա՛տ դարեր էլ աներկբայ կշարունակէ դոյութիւն ունենալ, գործել այդ երկրի ճէջ, — և այդ՝ ճինչև Հայի ամբողջական անհետացուծը:

Բայց շատ հեռուն չերթալու համար՝ նկատել տանք, որ նորագոյն ժամանակներուճս ՀԱՅԻ ՊԱՏՄԱՒԱԳԱՔԱԿԱՆ այդ ԻՐԱՒՈՒՆՔԸ հանդիսապէս ճանչցուեց և վերարճանագրուեց Բերլինի Դաշնադրութեան 61-րդ յօդուճոճովը: Հետեւաբար՝ Հայի այդ ԻՐԱՒՈՒՆՔԸ ճանաչել և ստորագրել է նո՛յն ինքն Օսմանյիւն: Եթէ Բերլինի Դաշնադրութեան 61-րդ յօդուճոճովը ճանչցուեց Հայի ՊԱՏՄԱՒԱԳԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ այդ երկրի վրայ և նրա ընդարճակութեան ճէջ բնակաճ՝ տիրապետող Հայ տարրի համար բարենորոգուծ-



ների պէտք նկատուեց՝ “տեղական պահանջներին համեմատ”։ — ապա Հայի այդ իրաւունքը, իր ճարտիրոսացած զաւակների բազկի շնորհիւ, ո՛չ ճիւղն նորից ճանչցուեց և արձանագրուեց 1895 Մայիս 11-ի Ծրագրովը, այլև որոշուեց, զծագրուեց բարենորոգմաների այն ընդհանուր հիմունքները, տրամագրութիւնները և պայմանները, որոնք կարող էին, ծօտաւորապէս, բաւականութիւն տալ Հայերի տեղական պահանջներին: Հաւաքականօրէն ճշակած այդ Ծրագրով Հայաստանը ճանչրցուած է ճիւղ (bloc) և նրա վրայ ՊԱՏՄԱՒԱԳԱԿԱՆ անձեռնմխելի ԻՐԱՒՈՒՆՔ ունեցող Հայի ու այնտեղ բնակւող ա՛յլ տարասեւեռների համար որոշուած է բարենորոգչական այնպիսի հաստատութիւններ, որոնք բոլորովին տարբեր բնաւորութիւն պիտի ունենային՝ Օսմանեան պետութեան ճիւղ անյարակից (incohérent) ճասերից:

Մայիս 11-ի Ծրագրիրը հայկական պահանջները և իրաւունքները MAGNA CHARTA-ն է: Նրա զործագրութիւնը կարող է յայտարարել, ճգճգուել, բայց ո՛չ թէ մէջտեղից վերցուի: Իրերի ընթացքը, վաղ կամ ուշ, ինքն ի՛սկ նրա իրականացումը անխուսափելի կդարձնի: — Բայց դեռ Հայի բազուկը փշրուած չէ, նա կայ:

Արդ, Օսմանեան խարխլած պետութիւնը վերահաստատելու և նոր հիմունքները վրայ գնելու պատմական կոչումը ստանձնել ուղղ “երիտասարդներ” ի համար՝ ի՛նչ դեկավարիչ սկզբունքներ պիտի լինէին դէպի այն երկիրը, որ թրքական աշխարհակալած ճիւղ երկրներից տարբերուած, անջատուած է ո՛չ ճիւղն ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, ՅԵՂԱԳՐԱԿԱՆ տեսակէտից, այլև որի վրայ, անյիշատակ ժամանակներից մինչև այսօր, Հայը իր արդէն անլիճելի ՊԱՏՄԱՒԱԳԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆ ունի և ի՛ր անցեալով, քաղաքակրթութեամբ, հասարակական ու ճանաւոր ձգտումներով բոլորովին զատ ճարձին է կազմուած Թիւրքիայի իր բախտակից ճիւղ տարրերից և ճասերից: — Քանզի, ոչնչացնել, ջնջել, ճուլել: — Բայց այդ քաղաքականութեան շա՛տ երկար ժամանակներից ի վեր կպած մնացին թէ՛ “Մերունիներ”ը և թէ՛ իրենց անդրանիկները, և զա՛ ո՛չ ճիւղ հետևանք տուեց նոյն ի՛սկ իրենց

ճիտումների տեսակէտից : Այդպիսի ճի քաղաքականութեան հետեւը այժմս, նախ՝ կլինէր անկարելի, ապարդիւն, ինչպէս անցեալը այդ ցոյց է տուել, և երկրորդ՝ անարդարանալի, նոյն իրենց այն նպատակի համար, որով առաջնորդուած պիտի գործէին այդ հրէշային, թէև Օսմանեան բռնապետութեան ո՛չ անձանօթ, ո՛ճ իրը : Եթէ " Երիտասարդներ " ը կարծուճ են թէ թրքական պետութեան բազկացուցիչ բոլոր օտարասեռ տարրերը ընդհանրապէս և Հայը՝ ճասնաւորապէս ճի կտոր խմոր, շաղախուելի զանգուճ են, որ կարելի է իրենց կաճքին և ուղաճին պէս կաղապարել, այս ու ան ճաւաղով ճի արհեստական շրջանակի ճէջ դնել, — դա էլ սխալ է, և անցեալը, կրկնուճ փորճերը, ինչպէս նաև ուրիշ ազգերի օրինակները, ցոյց տուեցին որ արդարև սխալ է :

Այս բոլորից յետոյ.—որովհետև " Ծերունիներ " ի խիստ բռնապետական, չափազանց կեղրոնացճան բէճիճը Օսմանեան պետութիւնը կորստի հասցրեց. որովհետև թրքական կայսրութիւնը բազկացնող տարասեռ ժողովրդից և անջատ ճասեր կազճող երկրներից, հակառակ Բացարճակ Բռնապետականների և Սահճանաղրականների կողճից բազճիցս եղաճ փորճերին, անկարելի է ճի աճոյլ ճի ու թիւն, ճի ազգութիւն կազճելու. — ուստի մնուճ է ճիայն ճի ճանապարհ, որով կարելի է ճիաճանակ թէ՛ Օսմանեան կայսրութեան պետական ճի ու թիւնը պահպանելու և թէ պայքարող տարասեռ ժողովրդներին ճէթ ճասնակի բաւականութիւն տալու ու այդպիսով թիւրքիան ընդհանուր անկուճից, բաճանուճից ազատելու : — Իսայն է՝ որ վերակազճուելիք թրքական պետութեան ընդհանրական հաստատութիւնների նպատակը պիտի լինի ՄԻԱԻՈՐԱԿԱՆ (unitaire), իսկ ճի ջոցը՝ ԱԶԳԱՅԻՆ—ԱԶՍՏԱԿԱՆ : Եւ այդ նպատակին կարելի է հասնել ճիայն տարբեր երկիրների պատճառքազաքական իրաւունքը, աշխարհազրական, ցեղազրական անհատականութիւնները հիճոսնք ընդունելով՝ տեղական ժողովրդական ընդարճակ ինքնավարական հաստատութիւններ առաջ բերելով և նը-



ը անցից ծագող պետական ընդհանուր, ճիացուցիչ հաստատութիւններ ստեղծելով: Եւ այդ ըէժիմի, այդ հաստատութիւնների ազդակները թիւրքիան ունի:

Ահա՛ Հիմնական տարրերը, որ “Երիտասարդ թիւրքիայ”ի ծրագրի իսկական ծառերը պետի կազմէին. այդ գաղափարներովն է որ սապարէզ պիտի իջնէին բոլոր “Երիտասարդները՝ սկզբից մինչև այսօր: Այդ էր միակ ուղին, միակ ազդու միջոցը, որով նրանք՝ կարող պիտի լինէին Օսմանեան Բռնապետութեան տակ հեծող թէ՛ համացեղ և թէ՛ օտարացեղ քրիստոնեայ տարրերին հաւասարպէս շահազրգուելու և նրանց գործակցութիւնը խնդրելու պետական ընդհանուր վերաշինութեան գործին մէջ: Եթէ իրենք ցանկացողներ են Օսմանեան համապետական վերանորոգութեանը, իրողութիւնն այն է, որ չզիտեն թէ ի՛նչպէս, ի՛նչ կերպով, քաղաքական ի՛նչ հաստատութիւններով վերանորոգութեան այդ գործը կարելի է իրականացնել:

Ուղիղ գաղափարները ազգեր են կեանքի կանչում և պետութիւններ ստեղծում, իսկ սխալ մտքերի կիրառութիւնները գոյութիւն ունեցող ազգութիւններ են ջնջում և կազմում պետութիւններն էլ քայքայում:

Այժմ մի կողմ թողնելով խնդրի ընդհանուր կողմը՝ դառնանք Հայաստանին:

Իրերի ստացած դրութիւնը, պատմութեան որոշ ընթացքը արդէն այն ուղղութիւնն են ընդունել, որ, այսօրուայ “Երիտասարդ թիւրքեր”ը, իսկապէս, կամայ ակամայ ստիպուած են Հայ ազգի և նրա Հայրենիքի ՊԱՏՄԱՒԱԳԱԿԱՆ իրաւունքը և ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ իբրև ձեռք բերուած, հաստատուած իրողութիւն ընդունելու:

Այստեղ ո՛չ խուսափանք կարող է լինել և ո՛չ էլ երկղիծութիւն:

“Երիտասարդներ”ը կա՛մ այդ պիտի ընդունեն իբրև Հայքի արդէն ունեցած իրաւունք, կատարուած մի իրողութիւն և ըստ այնմ որոշեն իրենց պաշարի պայմանները ու հիմունքները՝ ընդդէմ թիւրք Բռնակալութեան, կա՛մ պիտի մտնեն “Մերունիներ”ի բանակը և աշխատեն միահամուռ ոյժով

պատմութեան ընթացքը շուռ տալ և բոլորովին հակաբնական, իրերի բնաւորութեան հակառակ բաղկացութիւններ ստեղծել, եթէ միայն կարող են: Այլապէս՝ եթէ չեն ուզում պատրուակեալ կերպով Սուլթանների թիկնապահները մէջ ծանկի, և ցանկանում են տիրող միահեծանութեան դէմ ծաքառել, այն ժամանակ պարզորոշ կերպով պէտք է ճանաչեն, հաշուի առնեն և իրենց պայքարի հիմունքները մէկն անեն Հայի արդէն ձեռք բերուած, նոյն ի՛սկ ճանչցուած իրաւունքը՝ այն է ինքնավար Հայաստանի գաղափարը:

Եւ պատմութեան ընթացքը շատ պարզ է:

“Ծերունիներ”ը և իրենց նախորդները Հայութիւնը “Կրօնական” մի համայնքի վերածեցին: Հակառակ տիրող տարրին՝ այդ “Կրօնական Համայնքը” ժամանակի ընթացքում կարող եղաւ իր իրաւունքների շրջանակը ընդարձակել և դառնալ “Կրօնա-քաղաքական մի Համայնք”: Պատմական գործոն ոչմերը ասպարէզ մտնելով՝ նրանք “Երիտասարդ Հայեր”ի մէջ ծարմացան և Բերլինի Դաշնադրութեան 61րդ յօդուածով Հայը քաղաքական կեանքի վերակոչուեց: Իսկ Մայիս 11-ի Ծրագրովը նոյն իսկ որոշուեց քաղաքական կեանքի այն պայմանները, այն հիմունքները, որով պիտի շըրջանակուէր Հայկական Վեց նահանգները՝ Պանի, Կարինի, Բաղէշի, Տիգրանակերտի, Խարբերդի և Սեբաստիայի մէջ ձեռնարկուող և իր ազգային անհատականութիւնը ունեցող Հայութիւնը:

Ուրեմն, եթէ “Երիտասարդ Հայեր”ը և “Երիտասարդ Թուրքեր”ը մի օր ուզեն ձեռք ձեռքի տալ և միահամուռ ոչմերով կռիւ մղել տիրող ընդհանուր Բռնակալութեան դէմ, — այդ համագործակցութիւնը պիտի դրուի այնպիսի պայմանների և ուղղութեան վրայ, որ ընդհանրական կռուի նպատակը և հետևանքը լինէր՝ մի կողմից ձեռք բերել մի ինքնավար Հայաստան, իր տեղական քաղաքական ուրոյն հաստատութիւններով, և միւս կողմից՝ ընդհանուր, ուղղակի, գաղտնի և հաւասար բուէի վրայ հիմնուած Ռաճկավարա-



կան ծի սահմանադրութիւն՝ ամբողջ Թիւրքիայի համար, որից բխած Կեդրոնական Հաստատութիւնը՝ Ընդհանուր Պարլամէնտը կարող լինէր ինքնավար բոլոր երկրներին, հետեւաբար և՛ Հայաստանի ճիշտ պետական ճիւղութիւնը անխախտ պահէր:

Ահա՛ իրերի իսկական բնաւորութեանը հասնապատասխան այն ճիւղին, իսկապէս չափաւոր և հնարաւոր նախապայճանը, որով պատճառով հողի վրայ կանգնած Հայ Յեղափոխականը կարող պիտի լինի իր գործակցութիւնը տալ “Երիտասարդ Թիւրքիայ” ին և օսմանեան համապետական վերանորոգութեան զաղափարը պաշտպանողներին:

Խնդիրն, ի հարկէ, դեռ ընդհանուր սկզբունքի վրան է. իսկ գալով գործնականին, դեռ բաւական չէ, որ “Երիտասարդ Թուրք” երբ, աւելի կամ նուազ անկեղծութեամբ, բաւերով ճիւղն ընդունեն Հայ Յեղափոխականի պաշտպանած այս հիմնական կէտերը, այլ նրանք նախապէս, որոշ կերպով, այդ ցոյց պիտի տան և՛ գործով՝ իրենց պայքարի ձեւերով և ուղղութեամբ, — հակառակ պարագային որ և է յարձարումն (compromis), որ և է գործակցութիւն և համերաշխութիւն չի կարող լինել ձեր և նրանց ճիշտ:

Եւ այդ հասկանալի է թէ ինչո՛ւ:

“Երիտասարդ Թիւրք” երբ ծի անգամ ընդմիջտ պէտք է համոզուին, որ առանց Թիւրքիայի բաղկացուցիչ բոլոր տարրերի ճիւղահմուտ գործակցութեանը և համերաշխութեանը՝ անկարելի է ամբողջ Թիւրքիան վերանորոգել և նոր հիմունքներ լրաց դնել: Իսկ այդ գործակցութիւնը և համերաշխութիւնը պէտք է որ ունենայ իւր կանխորոշ պայճանները և նպատակները:

Մենք այստեղ, պարզ է, դեռ չենք խօսում դրսից գալիք դժուարութիւններ ձայն: Այսքանը ճիւղն ասենք, որ Սուլթանականութիւնը և իրեն նեցուկը եղող հին ոյժերը՝ առանց օրհասական ճարտ մղելու, տեղի չպիտի տան, և այդ ճիւղն այն աստիճան, որ նրանք, ի հարկին, կոչ պիտի անեն արտաքին օգնութեան. իսկ թէ

այդպիսի օգնութեան ընդունակ են զալ զըսի Րէսկ-  
ցիօնէր Ոյժերը,—այդ ճասին կասկած անգամ չի  
կարող լինել. Թուրք պատմութիւնը պատճառան աջգլխի  
դէպքեր շատ ունի արձանագրած: Բոլորովին ուրիշ կը լի-  
նի խնդիրը, սակայն, երբ Հրապարակ կձանեն պայքարող  
այն ժողովուրդները՝ որոնց Գատերը ճիշդագոյնօրէն ար-  
դէն ճանչցուած և ստորագրուած են: Այդ դէպքում, և  
այդ դէպքում ճիշտ, ընդհանուր զիւանագիտութիւնը,  
Արեւեկան Խնդրով շահագրգռուող պետութիւնները—որոնք  
Թիւրքիայի իսկական տէրերն են և առանց որոնց ո՛չինչ  
կարելի է անել—կամայ ակամայ ստիպուած պիտի լինեն  
Թիւրքիան պահելու սկզբունքի վրան Համաձայնութիւն  
կայացնել: Խնդրի այդ ճասը այնքան պարզ է, որ չենք  
ուզում ճանրածաննել և պատճառական փաստեր ճատնա-  
նիշել:

Առնենք պատճառական ճի ա՛յլ երեւոյթ:

X

**ՕՍՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐ**

Օսմանականութիւնը (Օսմանլըլըք) ճի  
սկզբունք է, որ Թիւրքիայի ներքին քաղաքականութեան տիրող  
ուղղութիւններից ճէկն է Համարուած: Այդ սկզբունքի  
իրագործմանն են Հետապնդել, ճասնաւորապէս անցեալ  
դարու 30-ական թուականներից, ո՛չ ճիշտ թուրք պետական  
ղեկավարիչ անճնաւորութիւնները և "Մերունիներ"ը, այլև  
"Երիտասարդ Թուրքեր"ը. այդ նկատմամբ ընդհանուր Հա-  
մաձայնութիւն է եղել և աճէնքը անխտիր, աւելի ու նուազ  
սաստիկութեամբ, ազգային այդ քաղաքականու-  
թեան շուրջն են դարձել: Օսմանեան Կայսրութիւնը իր  
ամրապնդումը և կայունութիւնը կը գտնէր ճիշտ այն  
ժամանակ, երբ նրա ճէջը բովանդակուած ազգութիւնները  
բոլորը Օսմանցիներ կրաւնային կամ օսմանցիներ լինելու  
գաղափարը կընդունէին վերջնականապէս, — սա էր զեկա-  
վարիչ սկզբունքը:



Օ ս ծ ա ն ա կ ա ն ու թ ե ա ն գաղափարը պաշտպանել և իրագործել են աշխատել ո՛չ ծիայն բրխատոնեայ ազգութիւնները՝ Հայերի, Յոյների, Բուլղարների, Լայն, նկատմամբ, այլև ճահճեղական ժողովրդները՝ Արաբների, Ալբանացիների, Քրիւղերի, Չերքէզիների, Լազերի, Լայն: “Օսմանլիքը” Թրքական նացիօնալիզմի ազգակների մէջ ամենազօրաւոր և առաջին տեղն է բռնել:

Տիրող ընդհանուր Համոզմունքն է եղել, որ Թուրքիայի թուլութեան, նրա ճասերի անջատման և դէպի անկումն տանող գլխաւոր պատճառներից մէկն էլ այն իրողութիւնն է եղել, որ այդ երկրի ընդարձակութեան վրայ ճեճ ճաւալով գոյութիւն են ունեցել կեղրոնախոյս զօրութիւններ, որոնք արդիւնք են եղել տարբեր ազգութիւնների գոյութիւն ունենալուն և իրենց կենսականութիւնը պահպանելուն: Ուստի ընդհանուր երևոյթը, արդիւնքը ջնջելու Համար՝ պէտք է անհրաժեշտութիւն է տեսնուել վերջացնել ճագում տուող պատճառները: Եւ ի՞նչպէս կարելի էր այդ նըպատակին հասնել,—բացարձակ կէ դրոնացմամբ՝ այս ճասին էլ ընդհանուր համաձայնութիւն է եղել Թրքական Բացարձակապետութեան ղեկավարիչ ոյժերի, “Ծերունի”, ների և “Երիտասարդ”, ների միջև: Օրէնսդրական, վարչական, դատարանական ամբողջ մէխանիզմը այդ ուղղութեամբ է լարուել և այդ ուղղութեամբ էլ բարոյել են Թուրք բոլոր հրապարակախօսները՝ սկսած մոլլայից մինչև հասարակ թերթերի խմբագիրները:

Եւ արդարև, պատմութեան մէջ քիչ չեն եղել օրինակներ, երբ պետական այդպիսի գաղափարներ իրագործուել են և յաջողութեամբ էլ գլուխ տարուել: Պատմութիւնը ցոյց է տուել, որ մի պետութեան ընդհանուր ճարմնի մէջ ճտնող մի կամ մի քանի ազգութիւններ կարելի է ձուլել, կլանել, լրիւ նոյնացնել (assimiler): Եւ այդ լինում է այն ժամանակ, երբ պետական վարիչ ոյժը իր ձեռքին ունեցող, կլանող, ձուլող, նոյնացնող ազգը եղել է աւելի՛ դարգացած, աւելի՛ ուժեղ, աւելի՛ կենսականութիւն ունեցող. իսկ կլանուողը, ձուլուողը, նոյնացնողը, դրա հակառակ, եղել է աւելի՛ թոյլ, աւելի՛ յետամնաց. այնպէս որ այդպի-

սի պայծաններու՝ դրուած նուաճուող ազգութիւնները՝ իրենց ճառար, բարոյական և նիւթական շահի տեսակէտից՝ աւելի նախաձեռար են համարել, նոյն խակ գիտակցարար, կլանուելու, ձուլուելու, քան թէ առանձին գոյութիւն պահպանելու: Անշուշտ, ճի Բրետոնի, ճի Բասքի համար, ամէն տեսակէտով, նախաձեռարելի էր կլանուիլ Փրանսիական ազգութեան ճէջ և Փրանսիական պետութեան ճի ճասնիկը դառնալ, քան թէ ուրոյն զիրք բռնել և իր երկրի ապառաժների վրան հաստատուել, կղղիանալ՝ զուրկ ճառարական և քաղաքակրթական աղղակներից: Փրանսիական ազգութեան ճիրի, սրբոյ ճէջ ճանելով՝ նա ճանակցուճ էր համաշխարհային քաղաքակրթութեան և յառաջադիճութեան, քան թէ լճանուճ՝ ճեկուսացաճ զիրք պահելով: Գայլերը (Ուէլշները), Սկոտլանցիները Անգլիական ազգութեան ճարմնի ճէջ ճանելով՝ նիւթապէս և ճառարապէս աւելի շահեցան:

Վենդերը Գերճանացիներ դառնալով, գերճանականութեան զիրկը ճանելով, աւելի օգտուեցան, քան կորցրին:

Որքան որ սա թոյլի իրաւունքը ճճանաչելու ճի սկզբունք է, բայց այդպէս է եղել պատճութեան ընթացքը ճինչև այսօր, թէև այդպէս ճի լինիլ ապագայում:

Սակայն խնդիրն այն է թէ թիւրքիայի բաղկացուցիչ ազգութիւնները աճող վիճակի ճէջն էին գտնուճ: Թուրք ազգութիւնը, Օսմանլըքի գաղափարների իրագորճճան հետապնդողները Փրանսիացիներ, անգլիացիներ, գերճանացիներ էին:

—Ո՛չ: Պատճութիւնը, իրականութիւնը այնտեղ է՝ խնդրի այս կողմը պարզ կերպով որոշելու համար:

Թիւրքիայի ճէջ ամփոփուող, նրա բաղկացուցիչ տարրերը կազմող ազգութիւնները ո՛չ Բրետոններ են, ո՛չ Բասքեր և ո՛չ էլ Վենդեր:

Իրականութիւնը այնտեղ է՝ այս կէտն էլ հաստատելու: Ի՛նչ է ազգութիւն:

—Մարդիկների ճի ամբողջութիւն, որ ունի նո՛յն լեզուն, նո՛յն սովորութիւնները, պատճական նո՛յն անցեալը, նո՛յն ճագումը, կայլն, և օճառուճ է բարոյական համանճան յատկութիւններով:



Պատճառները, ինչպէս և ընկերարանութիւնը, ցոյց է տալիս և՛ այն, որ ազգերի կազմուելը, ձևակերպուելը և զարգացումը արուեստական ճի ձևակերպութիւն չէ, որ կարելի լինի ուզած ժամանակին, ճի քանի վճիռներով և հրամաններով քանդել, ոչնչացնել, լուծել. այլ նրա կազմաւորութիւնը ճի այնպիսի բնական երևոյթ է, որի գլխաւոր պայմաններն են ցեղը, հանրական ծագումը, միջավայրը և պատմական այն բոլոր ազդակները, որոնք ձևակերպել, արտադրել, յառաջ են բերել այդ ազգութիւնը: Աճէն ազգ զարգանում է իրեն առանձին յատուկ և պառշաճ էվոլյուցիայով, որ նրան տալիս է բարոյական և պատմական ա՛յն կազմը, ա՛յն կերտուածքը, ա՛յն շէնքը, հանճարը և առանձնայատուկ գծերը, ինչպէս որ ճի կենդանական էակ յաջորդաբար ստեղծում է իր սեպհական օրգանները և իմացականութիւնը: Այդպիսով է որ աճէն ազգ՝ որպէս կազմակերպուած ոյժ՝ ունի իր սեպհական կեանքը, իր ինքնուրոյնութիւնը, իր անհատականութիւնը, որ նրան տարբերում է ճիւս ազգութիւններից: Այդպիսի համախճբումների ճէջ անցեալ սերունդների գործունէութիւնը և ճառճունքը բաղադրուած, շաղախուած է ներկայ սերունդների հետ և այդպիսով էլ պատրաստուած՝ ապագայ սերունդների բախտը:

“ Ազգերը, ասում է Ռընան, \*) ինչպէս են Ֆրանսիան, Գերմանիան, Անգլիան, գործում են անձերի նճան, որոնք ունին բնաւորութիւն, ճիտք և որոշեալ շահեր. ազգերի ճասին կարող են դատել, ինչպէս ճատում են ճի անձի ճասին: Նրանք էլ ունին, ինչպէս ճի կենդանի էակ, իրենց էութեան և իրենց պահպանութեան ճգացճունքը, ճաճուկ բնազդը. այնպէս որ՝ քաղաքագէտների ճաճուճներից անկախ, ճի ազգութիւն կարելի է համեճատել ճի լցական և խորաթափանց կենդանիի հետ, ինչ որ վբերում է իր ճոյութիւնը ազատելուն և իր սեռի յանկանութիւնը ապահովելուն”:

\*) Dialogues et fragments philosophiques, էջ 89.

Արդ, Թիւրքիայի ճէջ գանուող ազգերը այս բոլոր յատկանիշները և պայմանները լրիւ ներկայացնում են . ուրեմն և նրանք այլևս անվերածելի են :

Եւ երբ այդպէս, ապա Թիւրքիայի ճէջ բովանդակուած ազգութիւնները այնպիսի ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ են, որ ո՛չ ճիւղն չի կարելի ջնջել, խորտակել, այլ նրանց անկարելի է անտեսել և Հաշուի չառնել՝ երբ Հարցը գալիս է ընդհանուր պետական խնդիրներին :

Օսմանականութեան գաղափարը, որպէս փոխառնուիլի և ուրիշներին նմանուելու ճի՛ միտք, պարզ բան է որ գոյութեան առանձին իրաւունք չունի . փաստերը, իրողութիւնները այնտեղ են ճեր ասածները Հաստատելու Հաճար . նա ո՛չ միայն որ և է Հոյ չունի, այլ ժամանակ է Հասկանալու, որ նա որ և է չափով խսկի չի էլ կարող իրականութիւն ստանալ, ինչքան էլ որ նրա Հեղինակները դու յաճախին :

Օսմանականութիւնը այն գլխաւոր ազգակներից ճէկն է, որ Թուրք Բռնապետութեան Հետ միացած՝ յառաջ են բերում և վառ պահում անջատականութեան ողին : Եթէ բաղկացուցիչ ազգութիւնները կեղրոնախոյս դիրք են ընդունում, այդտեղ պատասխանատուութեան ճի՛ ճեճ բաժինը ընկնում է Օսմանականութեան գաղափարը իրագործել ճրգտողների վրան : Որոշ է, ուրեմն, որ այդ միտքը և ճգտումը միայն անհատական շխութիւն կարող է ստեղծել և վանդական ոյժ հանդիսանալ ու թոյլ չտալ որ ընդհանուր գործակցութիւն յառաջանայ : Ժամանակը Հասել է այդ գաղափարի ճեռներուն և ճէջտեղից արճատապէս վերանալուն : Օսմանեան quasi բարենորոգիչները, պետական անճնաւորութիւնները, նաճանաւանդ " Երիտասարդ Թուրքեր " ը իրենց գլխից մի անգամ ընդմիշտ դուրս պիտի ճգեն անախրոնիզմ եղող այդ միտքը :

Որ այդ այդպէս է, մի կողմ թողնենք ընդհանրութիւնը, և դառնանք Հայ ազգութեան :

Հայը ազգ էր, այս բառի քաղաքական իմաստովը, դեռ իր ընկճութուց և քաղաքական անկախութիւնը կորցնելուց շատ առաջ . նուաճութուց յետոյ էլ, ինչքան էլ որ դարեւոր ամէն տառապանքների նա ենթարկուեց, ինչքան որ քան-



ղիչ, կործանիչ ձեռքը նրա վրայ ծանրացաւ, այնուամենայնիւ՝ նա շարունակեց ԱԶԳ մնալ: Հայը շարունակ պահեց իր ազգային կենսունակութիւնը, չկորցրեց իրեն ինքնուրոյնութիւն տուող յատկութիւնները. նա ծառ եւրոպական քաղաքակրթութեան շաւղի մէջ, զարգացաւ, աճեց, կուլտուրապէս բարձրացաւ և թրքական բռնապետութեան տուած քաղաքական, տնտեսական և ընկերային պայմանները նրա համար այլևս սեղծիչ, ուրեմն և անտանելի դարձան: Ուստի և ինքնառաջնութիւն չգործելու համար՝ ճի հրամայական անհրաժեշտութեամբ, որպէս իր պատճառութեան և կեանքի արդիւնք, նա ձգտեց նսր կեանքի՝ յեղափոխական օրէն:

Ուրեմն, ո՛չ միայն ազգայնօրէն նրան այլևս չի կարելի ձուլել, խորտակել, կլանել, և դա շա՛տ բարձր է Օսմանականութեան գաղափարը ծարմնացնողների ոյժերից, այլ նրան պէտք է հաշուի առնել, որպէս Թիւրքիայի մէջ գոյութիւն ունեցող քաղաքական ճիւղօրէն տարր ու այնպէս ձգտել ընդհանուր Թիւրքիայի վերանորոգութեանը:

Օսմանեան պետութեան ամբողջականութիւնը պահպանել ուզող « Երիտասարդ »ները այդ իրողութիւնը անտեսել չեն կարող, փորձեն՝ ինչքան որ կուզեն:

Եւ երբ ազգութիւնները քաղաքական տարրեր են Թիւրքիայի մէջ, ուրեմն, հասարակ ողջմտութիւնը պահանջում է, որ նրանք գոյութեան առանձնաշատուկ պայմաններ էլու-նենան, — իսկ այդ կարելի է միմիայն քաղաքական կատարեալ ինքնավարութեան ձեւով, և ո՛չ մի ուրիշ սիտէմով. այդ է միակ ուղին, որ ցոյց է տուել պատճառութիւնը և յառաջադէմ ազգերի կեանքը:

Ազգերը իրենց գոյութիւնը կարող են պահպանել, պահել ո՛չ միայն անջատականութեամբ և կամ առանձին անկախութեամբ, այլ նրանք այդ նպատակին կարող են հասնել և՛ ինքնավարական ձեւով. այդ ձեւն էլ նրանց գոյութիւնը կապահովի, նրանց միջոց կտայ զարգանալու, յառաջադիմելու և իրենց ընդունակութիւնները երեւան բերելու համաշխարհային պատճառութեան շրջանակի մէջ: Եւ դա այնքան ճշմարիտ է,

որ պատճառով շատ օրինակներ ունի տուած թէ ի՛նչպէս իրենց սեպհական անկախութիւնը արդէն ունեցող ազգութիւններ՝ քաղաքական ինքնավարական սխտեճով՝ ճիացել, դաշնակցել են իրարու հետ և պետական ծի ընդհանուր ոլորտի ճէջ ճտել :

Ազգերի ինքնավարական սիստէճը այն ճիակ ճիջոցը և ճեւն է, որով կարելի է Թիւրքիային ՆՈՐ կազմ տալ, ՆՈՐ հիճունքների վրայ դնել, պահել նրա աճբողջութիւնը և վանել անջատողական ոգին . հակառակ ճանապարհը կտանի, անսայթաբօրէն, դէպի անջատումն, դէպի պետական ընդհանուր քայքայումն, — դա է իրականութիւնը :

Պատճառութիւնը, նոյնպէս, ցոյց է տալիս, որ քաղաքական հաստատութիւնների փոփոխութիւնները օգտակար և յարատե են լինում ճիայն այն ժաճանակ, երբ նոր ճեւերը արդէն հնի ճէջ սաղմնաւորուած են լինում : Արդարև, այդպէս էլ եղաճ է սկզբում Թիւրքիայի պետական կեանքը :

Իր պատճառութեան սկզբնական օրերում՝ ճոկեւանդութիւնից, անհաճբերողականութիւնից և իր թուլութիւնից ստիպուած, նա նուաճուած ազգերի հաճար սեպհական, ազգային հաստատութիւնները սկզբունքն էր ընդունել և այդպիսով էլ իր պետական իրաւունքի ճի ճասն էր դարճրել ազգերի ինքնուրոյն գոյութեան և սեպհական հաստատութիւնների գաղափարը . հայը ունեցել է և ունի իր շատ սեղճ "Սահճանադրութիւն"ը, որ ինքնավարութեան ճի սաղմն է և այդ սաղճը ո՛չ թէ ջնջել պէտք էր, այլ աշխատել աւելի ընդարճակել, աւելի լայն սահճաններ տալ : Նոյնը և՛ ուրիշ ազգութիւնների նկատճաճը :

Սրանից յետոյ, ճիջանկեալ կերպով, ճի քանի խօսք աւելորդ ճէ այն երկու գլխաւոր առարկութիւնների նկատճաճը, որ շարունակ կրկնում են ճայրայեղ կեղբոնացճան կողմնակիցները և "Երիտասարդ Թիւրքիա"ն :

Նրանք ասում են, որ ինքնավար ազգերը ո՛չ ճիայն անճիջապէս խաղալիք կգաւնան Թիւրքիայի անկճաճը շահագրգռուող պետութիւնների ճեւքին, այլև իրենց առաջին



ձգտուճը կանեն, օգտուելով ներկայացած պայճաններէց, բոլորովին դատուել, անջատուել:

Աւանց ապագային վերապահուած լինողներէրի ճասին a priori դատողութիւններ անելու, նկատենք միայն այս արդեօք ո՞ր ազգերը աւելի վտանգաւոր և իրենց բախտը թիւրբիայից իսպառ բաժանողներ կլինին, — ստրկացածները, ամէն տեսակ հարստահարութեանց ենթարկուածները, ապազգայնացման դրութեան մէջ ապրողները, թէ՛ կեանքի և գոյքի, ճարդկային և ազգային ամէն իրաւունքներ վայելողները, որոնք տէր լինելով օրէնսդրական և վարչական իրենց ներքին՝ տեղական գործերին, ամէն միջոց կունենան իրենց ընդունակութիւնները երեւան դնելու իրենց Մայր-Հայրենիքի մէջ:

Երբ ընդհանուր թիւրբիայի մէջ կտեղծուի տանելի կեդրոնական մի կառավարութիւն և պ ե տ ու թ իւ ն ը կանձնաւորի այդ երկրի մէջ ապրող բոլոր ժողովուրդները ու դրուած պետական ընդհանուր օրէնքները արտայայտիչ կըլինին բոլոր ազգերի կամքին, — այն ժամանակ բաժանման, անջատականութեան, օտարի ձեռքին խաղալիք դառնալու երեւոյթները ըստ ինքեան կվերանան և իսկի գոյութիւն չեն էլ կարող ունենալ: Բաղկացուցիչ կազմ ունեցող Նորագոյն Պետութիւնների օրինակները այնտեղ են՝ մեր այս ասածը հաստատելու համար:

Այն միւս առարկութիւնը՝ թէ ինքնավարական սիստեմը յառաջ կբերի պետական ընդհանուր թուութիւն և մի ու թ իւ ն ը կկանգարի— դա, նոյնպէս, լուրջ հայեցակէտ չի ներկայանում: Ծատ հին ժամանակներից սկսած՝ պատմութիւնը ցոյց է տալիս բազմաթիւ օրինակներով, որ ո՛չ միայն ամենից աւելի շատ կործանման սաղմեր են ներկայացրել չափազանց կեդրոնացում ունեցող պետութիւնները, այլև մի ու թ ե ա ն և թուութեան կողմից նրանք ամենից աւելի են տուժել: Ընդհակառակը՝ ուրիշ բազմաթիւ օրինակներ ցոյց են տալիս, որ ինքնավարական կազմ ունեցող երկիրները ամենից աւելի են ջանացել, իրենց շահի տեսակէտից, աւելի սերտ կերպով կապուելու ընդհանուր հայրենիքի և երկրի հետ, — Անգղիա-

կան գաղութները այդ ճափն կասկած չեն թողնում, դեռ թողնենք ձիւս երկրների օրինակները :

Այնպէս որ՝ Թիւրքիայի մէջ ինքն ա վ ա ր ա կ ա ն ամէն զրուծեան հակառակողները այդ երկու կողմից էլ սխալուած են :  
Անցնենք ձի ուրիշ՝ աւելի հետաքրքիր երեւոյթի :

## XI

### ԹԻՒՐՔԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱՅՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Թիւրքիայի բախտով ճասնաւորապէս շահագրգռուած պետութիւնները՝ իրենց հակամարտ շահերը ձի կերպ, դէթ ժամանակաւորապէս, հաշտեցնելու տեսակէտից՝ յաճախ հարկաւորուել են յայտարարելու թէ այդ պետութիւնը պէտք է պահել, որպէս անհրաժեշտութիւն : Բայց հին շրջանակով պահելը անկարելի էր նկատուել, իսկ նՈՐ ի՞նչ ձևի պէտք էր վերածել, — այս է եղած գլխաւոր խնդիրը՝ որ երկար ժամանակ զբաղեցրել է թէ՛ եւրոպական զիւանազիտութիւնը և թէ՛ անկախ մտքերը : Այդ հարցին, Արևելեան Խնդրի պատմութեան ընթացքում, երկու որոշ պատասխան է տրուել, պատասխաններ՝ որոնցից ամէն մէկը Թիւրքիայի ընդհանուր վերաշինութեան ձի բնորոշ սիստէմն է ներկայացրել :

Ֆրանսիական զիւանազիտութիւնը գլխաւորապէս, սրա հետ յաճախ ճիացած և՛ Անգղիականը, այն գաղափարն են պաշտպանել, թէ Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան խնդիրը պէտք էր դնել ճիատեսակ հիմունքների վրայ, այնպէս որ ամբողջ երկրի մէջ պէտք էր ճիւղման և համատիպ բարեկարգութիւններ ներմուծել՝ առանց ամենափոքր անգամ ուշադրութիւն դարձնելու տեղական պայմաններին, ցեղագրութեանը և աշխարհագրական դիրքին ու անցեալին, և այդ պիտի կատարուէր ամենախիստ կեղրոնացումով : Եւ ի՞նչ պիտի լինէր զրա ընդհանուր նպատակը, — այն՝ որ Թիւրքիայի բազկացուցիչ բոլոր ազգութիւնների ճասնաւոր արտօնութիւնները և առանձնայատկութիւնները պիտի ջնջուէին, ամէն տարասեռ տարրեր իրենց գոյութիւնը պիտի կորցնէին և այդ բոլորի արդիւնարարը պիտի լինէր ընդհանուր ձուլումն և Օսմանեան ձի ազգութեան ձևակերպումն :

Ընդհանուր բարեկարգութեան երկրորդ սիստէմը, աւելի,



առաջարկել և պաշտպանել է Ռուսիան:— Աչքի առաջ ունե- նալով այն իրողութիւնը, որ Թիւրքիայի մէջ ապրում են ո՛չ թէ մէկ, այլ մի քանի տարբեր ազգութիւններ, որոնք իրարուց զանազանում են աշխարհագրական, ցեղագրական պայճաննե- րով, իրենց անցեալով և ունեն տարբեր տեսակի պահանջներ ու ձգտումներ, ուստի ամէն երկրի մէջ բարեկարգութիւններ պիտի ձտցնուէր իր տեղական պայճաններին և պահանջնե- րին համեմատ, և այդ կարող էր լինել՝ Ինքնավարու- թեան սխտէմը ընդունելով, իսկ ինքնավարական երկիրները պէտք էր առնել եւ րոպական երաշխաւորու- թեան և կօնտրօլի տակ: Ռուսիան բացարձակ կեդ- րոնացման հակառակ է եղել և դա համարել է անկարե- լիութիւն ու վնասակար:

Աւելի քան 70 տարի է, որ Թիւրքիայի ընդհանուր բա- րեկարգութեան խնդիրը հրապարակ է դրուել և այդ երկու սխտէմները շարունակ զիւանագիտական ձեռնարկների ու ծանուցագրերի նիւթ են կազմել:

Թիւրքիան, այս խնդրի մէջ, միշտ յարել է Ֆրանսիական ծրագրին, բայց ո՛չ թէ բարեկարգութիւններ իրագործելու, այլ ընդհանուր բարեկարգութեան դատը պատճառ բռնելով՝ արգելք հանդիսանալ և թոյլ չտալ որ ճամնաւոր բարեկար- գութիւններ տեղի ունենան, նոյն իսկ այն բարեկարգութիւն- ները, որոնց իրագործումը ընդհանուր զիւանագիտութեան կողմից, ուրեմն և Ֆրանսիայի ու Անգլիայի, անհրաժեշտու- թիւն և անյետաձգելի է նկատուել: Ընդհանուր բարեկար- գութեան խնդիրը զիւանագիտական մի ճարպիկ խող է եղել Թուրք կառավարութեան ձեռքին՝ Եւրոպային խաբելու, նրան զբաղեցնելու, յարուցուած խնդիրները յետաձգել տալու և իր անշարժութիւնը պահելով բողոքող ազգերի ձայնը խեղդելու: Որովհետև Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան խնդիրը իր պատմութիւնն ունի, ուստի համառօտիւ զձագ- րենք և՛ այդ քանի որ այդ հարցը երբեմն երբեմն երևան է գալիս և մտքերի մէջ շփոթութիւն յառաջ բերում:

Մի կողմ թողնելով Սէլիմ III-ի և Մահմուդ II-ի բարենո- րողչական ձգտումները, առենք նորագոյն ժամանակաշրջանը:

Սուլթան Աբդուլ-Մէջիդի օրօք, 1839-ին, Գիւլհանէի Հատտի Շէրիֆով Թիւրքիայի բոլոր հպատակների համար՝

առանց ցեղի և կրօնի խտրութեան՝ հաւասարութիւն, կեանքի և գոյքի ապահովութիւն էր խոստացուած: Ի՞նչ եղաւ դրա հետեւանքը: — Ոչի՛նչ, աւելի վնաս, քան օգուտ: Ո՛չ ճիւղն 1839—1856 ընդհանուր բարեկարգութեան տեսակէտով ո՛չինչ չիրագործուեց, այլ Թիւրքիայի բաղկացուցիչ ժողովրդների դրութիւնը և՛ս աւելի վատթարացաւ: Ընդհանուր բարեկարգութեան պատրուակի տակ՝ տեղական ինքնավարութիւնները խորտակեցան, խլուեցան այլատեւ տարրերի ճամնաւոր արտօնութիւնները և Կեդրոնական Իշխանութիւնը և՛ս աւելի զօրեղացաւ ու իր քանդիչ շօշափելիքները տարածեց երկրի ամէն կողմերը:

Իրլիճի պատերազմով (1854-1856), Ֆրանսիան և Անգլիան Թիւրքիան ազատելուց յետոյ՝ ուզեցին նրա ձեջ ճրտցնել վերանորոգող կեանքի սկզբունքներ: Պարիզի (30 Մարտ, 1856) Դաշնադրութիւնից առաջ՝ Աբդուլ-Մեջիդը տուեց ամբողջական բարենորոգումների ծի ն ո ռ խոստում՝ Հատտի Հիւճայիւնով, 18 Փետ. 1856: Այդտեղ նորից վերակրկնուած էին Գիւլհանէի Հատտի Շէրիֆով եղած խոստումները: Այդ նոյն Հատտի Հիւճայիւնը Պարիզի Կօնգրէսին հաղորդուեցաւ և Դաշնադրութեան ձեջը յիշուեցաւ: Եւրոպայի և Թիւրքիայի ձեջ ծի պայճանագիր կնքուեցաւ— Թիւրքիան խոստանում էր քաղաքակրթուիլ, նոր պետութիւն դառնալ, իսկ Եւրոպան էլ յանձն էր առնում Օսմանեան պետութեան ամբողջականութիւնը պահպանել:

Անցաւ 3 տարի և Հատտի Հիւճայիւնի ո՛չ ծի սկզբունքը իրագործուեց: Բաղկացուցիչ ժողովրդների դրութիւնը է՛լ աւելի վատթարացաւ:

Ընդհանուր բարենորոգումները գործադրելու համար, 1859-ին, դիւանագիտական ծի արշաւանք սկսուեց: Երբ այդ հետապնդումը շարունակուած էր, 1860 ին, յանկարծ Լիբանանի ճիչը բարձրացաւ:—Լիբանանի ձեջ աւելի ամուր կերպով հաստատուելու համար՝ Թուրք կառավարութիւնը Դրուզներին զրգուել, ոտքի էր հանել և կոտորել էր տալիս Մարօնիաներին: Թուրք կառավարութիւնը, 20 տարուց աւելի էր, որ աշխատում էր այդ երկրի ձեջ ստեղծել կրօնական և ցեղային հակամարտութիւններ, ուր առաջ այդպի-



սի ծի երեւոյթ գոյութիւն չունէր: Պատճառական փաստերը եկած էին Հաստատելու, որ այդ կոտորածի կազմակերպողը, սաղրիչ ողին և գործադրել սուղը եղած էր ինքը՝ Կեղրոնական Կառավարութիւնը:

Եւրոպայի կողմից, Ֆրանսիայի զինու ճիշամտութիւնից յետոյ՝ Լիբանանը ստացաւ իր տեղական ինքնավարութիւնը, — ճի բրիտոնեայ կառավարիչ՝ ժողովրդից ընտրուած խորհրդականներով, երկիրը պիտի կառավարէր: Տեղական ժանդարմերիան անկախ էր Պոլսոյ Կեղրոնական Կառավարութիւնից: Ընդհանուր բրիտոնեայ կառավարչի նշանակուելը ենթարկուած էր Մեծ Պետութեանց հաւանութեանը: Շնորհիւ այդ սխտէճի, Թրքական ընդհանուր անապատի ճէջ Լիբանանը եղաւ ազատութեան, կեանքի և գոյքի ապահովութեան ճի ովասիս: Ընդհանուր բարենորոգումների արշաւանքը նորից վիսկսուեց. դարձեալ անյաջողութիւն:

Աբդ-իւլ-Մէջլիդը, 1861 ին, ճեռնուծ է և նրան յաջորդուծ է Աբդ-իւլ-Ազիզը: Որովհետեւ երկտասարդ զահակալը, իր շրջապատողներով ճիասին, բարենորոգչական առանձին ճիտումներ էր ցոյց տալիս, ուստի զիւանազրիտական արշաւանքը զաղարեց, աճէնքն էլ ճտան սպատողական զիրքի ճէջ:

1861—1867 բարենորոգչական ճի քանի ճեռնարկներ եղան՝ թղթի վրայ: Իրականութիւնը շարունակեց նոյնը մնալ. ո՛չ ճի փոփոխութիւն: Ֆրանսիական ճի յայտնի քաղաքական գորճակալ՝ (այդ ճաճանակուայ իրերի գրութիւնը) այսպէս է պատկերացնուծ. («Գողանուծ, սպանուծ, հրկիւզուծ են Թուրք բէկերը. գողանուծ է բրիտոնեայ առաջնորդը. գողանուծ է եպիսկոպոսը. գողանուծ է քահանան. գողանուծ է զաղին, գողանուծ է ճիւֆթին, աճէն որ գողանուծ է բացի աղանուց, այսինքն բայեայից, որին աճէնքն էլ փետրահան են անուճ»):

Աբդ-իւլ-Մէջլիդի առերևոյթն բարենորոգումների ատենն էր, երբ 1861-ին Բօսնիան ապտամբեց:

1866—1868 Կրէտական ապտամբութիւնը տեղի ունեցաւ: Այստեղ էլ, Լիբանանի նճան, Հաստատուեց տեղական ճի սահճանազրութիւն, բայց ո՛չ ժողովրդին բաւականութիւն տալու ճափով:

1867-ին ընդհանուր բարենորոգումների ինզիրը դար-

ձեալ ղիւանագիտական աշխարհի խորհրդածութեան առարկան է դառնում: Փրանսիան առաջադրում է իր պաշտպանած սկզբունքները, Ռուսիան՝ իրենը: Գորջակովը ուսական թէզը կեդրոնացնում է հետեւեալ եռանդուն երկառածի ձեջ, "autonomie ou anatomic" (ինքնավարութիւն կամ անդամատութիւն):

Թուրք կառավարութիւնը նորից յարեցաւ Փրանսիական սխտեճին՝ իր յանձնառութիւններէց խուսափելու համար. և այդպիսով, 1867—1870, ո՛չինչ չկատարուեց, թէև այդ ժամանակ Փրանսիական ազդեցութիւնը տիրապետող էր Թիւրքիայում:

1870-ին Փրանսիան այլևս չի խառնուում Արևելեան գործերին՝ ձեճ չափով:

Թիւրքիայի ձեջ ապրող ժողովրդների դրութիւնը երթալով՝ աւելի վատթարանում է:

1875-ին Բօանիան և Հերցեգովինան ապստամբում են: Գերմանիան, Ռուսիան և Աւստրօ-Հունգարիան ձշակում են տեղական բարենորոգումների ձի համեստ ծրագիր՝ բացառապէս Բօանիայի և Հերցեգովինայի ձեջ գործադրուելու: Օսմանեան կառավարութիւնը՝ այդ ծրագիրը ի դերեւ հանելու ղիտուճով՝ ընդհանուր բարենորոգումների ծրագիրը ձեջտեղ ղլորեց և 1875-ի վերջերը Աբդուլ-Մէջիպը նախ ստորագրեց ձի Փիրման, յետոյ ձեկ իրաղէ, որոնցով եռանդուն կերպով վերակրկնուճ էին 1839-ի և 1856-ի խոստումները. — "Այսուհետև ամբողջ կայսրութեան ձեջ՝ ժանդարմները պիտի ընտրուեն բացառապէս ամենաազնիւ ճարդիկներէց" հաւաստիացնում էր Խալիֆը, ուստի այդ երկու նահանգների համար առանձին ոչինչ չուղեց անել՝ ընդհանրութեանը չվիասելու նկատուճով: Հիւսիսի երեք ղահլիճները, սակայն, չուղեցին տեղի աղ. նրանք ձշակեցին Բերլինի յայտնի memorandum-ը, որին հաւանութիւն տուեցին բոլոր պետութիւնները՝ բացի Անգլիայէց: Երբ որոշեալ օրը ղեապանները memorandum-ը պիտի յանձնէին Բ. Դըրանը, յնտեղ ճարդ չղտան, որովհետև նախընթաց ղիշերը Սուլթանը ղահլնկէց էր եղել. — նրան սպանել էին:

Եկաւ Մուրատ V-ը. շուտով նրան փոխարինեց Աբդուլ-Համիդը. memorandum-ը ղարձեալ չյանձնուեց. որոշուե-



ցաւ ժամանակ տալ, որովհետեւ նոր սուլթանը ընդհանուր բարեկարգութիւնների ճիտում էր ցոյց տալիս և աշխատասէր ու եռանդուն ձեւին էր երեւում: Այս էր իրերի դրութիւնը զարնանը, երբ Բուլղարական ծի քանի նահանգներ, աշնանը, ապստամբեցան . 20 հազար Բուլղար կոտորուել էր . յառաջացել էր ընդհանուր զայրոյթ քաղաքակիրթ աշխարհում . պետութիւնները ճիջամտել ուզեցին, և 1877-ի դեկտեմբեր ամսին, Պօլսի ձեջ, կայացաւ Կօնֆէրանս: Կօնֆէրանսը կազմող լիազօրները բարենորոգումների ճի ծրագիր ձշակեցին, որ պիտի գործադրուէր ճիճիայն Բօսնիայում, Հերցեգովինայում և Բուլղարիայում՝ եւրոպական երաշխաւորութեան և վերահսկողութեան տակ: Լրիւ Համաժողովին, ուր ներկայ էին և՛ սուլթանի նախարարները, լիազօրները պատրաստուած էին իրենց ծրագիրը պարզելու, երբ յանկարծ թիղանօթները յայտարարեցին որ ամբողջ Թիւրքիան սահմանադրական կառավարչութեան էր վերածուել: "Ինչո՞ւ Համար տեղական բարենորոգումների ծասին էք դուք խօսում, երբ ձենք պզտ կառավարութեան բարիքը տալիս ենք բոլորին՝ անխտիր: Այդ ծամանաւոր արածնութիւնները, որոնց ծասին խօսում էք, չեն համապատասխանում նոր հաստատութիւնների ամբողջական ներդաշնակութեանը . ինչո՞ւ Համար արածնութիւններ ազատութեան ձոցի ձեջ", — ասում են թուրք ներկայացուցիչները: Լիազօրները թէեւ չհամոզուեցան, բայց յաջողութիւն էլ չգտան . կօնֆէրանսը վիժեց: Ռուսիան հեռացաւ եւրոպական Համաձայնութիւնից (Concert européen), և Ռուս Թրքական պատերազմը բացուեց:

Թիւրքիան պարտուեց:

Սան Ստեֆանօյի Դաշնադրութեան ձեջ ինքնավարութիւնների սկզբունքն ընդունուեց:

Բերլինի Դաշնադրութիւնը այն առաւելութիւնը ունեցաւ Պարիզի Դաշնադրութեան վրայ, որ Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան հարցը չուզեց ինդրի առարկայ անել, և դարձեալ ամէն երկրի տեղական պահանջներին բաւականութիւն տալու սկզբունքն ընդունուեց:

Բերլինի Դաշնադրութիւնից յետոյ՝ Թիւրքիայի ձեջ վերստին գործել սկսեց ազգայնական քաղաքական ու թիւնը՝ բուռն, ձուլի կերպով: Նուաճուող ժողովրդների դրութիւնը անտանելի դարձաւ:

1881—1882-ին պետութիւնները հաւաքական ջանքերով աշխատում են Հայկական բարենորոգումները ընդունել տալ, բայց ի գո՛ւր: Անգղիան ծանաւոր ջանքեր է թափում, դարձեալ անյաջողութիւն:

1885—1890 Հայկական նահանգները յուզումի ձեջ են ծանում: Կարնոյ դէպքից, Գում-Գափուի նշանաւոր Յոյցից և Փոքր Հայքի ալեկոծումից յետոյ՝ տեղի են ունենում Սասունի շարժումները և արժանայիշատակ (mémorable) ապստամբութիւնը (1892—1894) ՄՈՒՐԱՏԻ ղեկավարութեամբ: Գժազբուում է Մայիս 11-ի (1895) Ծրագիրը, որ ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ ի ն ք ն ա վ ա ր Հ ա յ ա ս տ ա ն ի ծ ի ծ ի ջ ու կ: Թուրք կառավարութիւնը նորից ընդհանուր բարենորոգութեան խնդիր է յարուցանում: Պետութիւնները չեն համոզուում, բայց ճ՛նշիչ ճիշոցի էլ ղիճելու կամք չեն ցոյց տալիս՝ բացի Անգղիայից. — և Ռուսիայի, Գերմանիայի չկամեցողութեամբ՝ Մայիս 11-ի Ծրագիրը գործադրութեան ձեջ չի ծանում:

Պաշտօնական թիւրքիան դարձեալ շարունակում է իր կարծեցեալ ընդհանուր բարենորոգութեան խնդիրը: Տեղի են ունենում Հայկական կոտորածները:

1897-ին Կրետէն նորից ապստամբում է. Եւրոպական ճիշամտութիւնից և Յունա-Թրքական պատերազմից յետոյ՝ նա ստանում է իր կատարեալ ինքնավարութիւնը:

1902—1903-ին զէնքի է ղրծում Մակեդոնիան: Յառաջ է գալիս Միւրջշտէզի ծրագիրը, որ իր ձեջ ունի ապագայ ի ն ք ն ա վ ա ր Մ ա կ ե դ ո ն ի ա յ ի ս կ զ ք ն ա տ ր ո թ ի լ ը ր :

Եւ այսպէս, այս համառօտ գժազբութիւնից զուրս է գալիս հետեւեալ երկու անհերքելի իրողութիւնը.

Առաջին՝ Բ ն դ հ ա ն ու ր Բ ա ր ե ն ս ր ո գ ու ծ ն ե ր ի Խ ն դ ի ր ը թուրք կառավարութեան ձեռքին քաղաքապետական ճի հակաշիւ ծրագիր է եղել, որով նա շարունակ աշխատել է հակառակել բարենորոգչական ինքնավարական սիւստէճի գործադրութեանը: Իր գլխաւոր առարկութիւններն են եղել, որ կայսրութեան ձեջ ամփոփուած ժողովուրդները անկարող են ձեկէն բարենորոգումների շաւղի ձեջ ծանել, ուստի իրերը պէտք չէ աճապարեցնել, այլ ճիշոց տալ, որ ամէն



ինչ աստիճանաբար կատարուի: Բացի դրանից՝ նա առարկել է, որ իր ֆինանսական ճասը թոյլ չի տալիս ընդհանուր բարեկարգութիւնները արագացնելու: Եւ այդ երկու առարկութեան զխառնոր նպատակն է եղել ծիջոց վաստակել, ճինչեւ որ կարողանայ իր զինուորական ոյժը վերակարգուրել և տարասեռ ժողովրդներին խալաւ խորտակել՝ նրանց գոյութիւնը արհամարհելի աստիճանի վերածելու չափ և ընդհանուր օսմանեան ազգութեան գոյութիւնը իրողութիւն դարձնել՝ ամէն ինչ հիմնելով ճիատարրութեան վրայ:

Երկրորդ՝ Թիւրքիայում ճինչեւ ցարդ որ և է զբաւկան և յարատեւող արդիւնք առեւ է ճիւսն ինքնավարական սխտէճը: Գրա հետ ճիասին պատճականորէն երեւան է եկել և՛ այն, որ տարասեռ ազգութիւնները ա՛յն աստիճան զարգացել են, որ այլեւս ան կարելի է նրանց խորտակել, կլանել և ձուլել, նաճանաւանդ որ արոր ու օսմանեան տարրը թէ՛ յետաճնաց է և թէ՛ կուլտուրապէս աւելի անզարգացած:

Մի ուրիշ իրողութիւն էլ այն է, որ Թիւրքիայի ճէջ ճինչեւ ցարդ ինչոր կատարուել է, դա չէ եղել ինքնաբերաբար, այլ դրոյց եկած ճ՛նշումի, եւրոպական պետութեանց ճիջաճտութեան հետեւանքով, — որը իր կողմից հետեւանք է եղել դժգոհ ժողովրդների զէնքի զիճելուն և յեղափոխական շարժումներ առաջ բերելուն:

Այսպէս է եղած Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան պատճութիւնը և նրա բնաւորութիւնը, ու զրա հաճար էլ Թուրք պետութեան գոյութեան երբեմնի ամենաջերճ պաշտպանները և թրքատէրներն անգամ — սկսած Ստրատֆորդ Կաննինգից ճինչև պրօֆ. Վաճպէրի — ինչպէս և շատ յայտնի քաղաքագէտներ, հրոպարակասոսներ ու պետական անճնաւորութիւններ, յուսահատուել են այդ պետութեան ապագային նկատճաճբւ ճներ օրերում ի՛սկ յանգել են, ճօտաւորապէս, հետեւեալ եղբակացութիւններին.

Առաջին՝ ինքն իրեն թողնելով, Թուրք պետութիւնը՝ ինքնաբերաբար և ինքնակամ ո՛չ ճի ընդհանուր կամ ճասնակի բարեկարգութեան պիտի ճեռնարկի. — նրան պէտք է ստիպել, հարկադրել վերելից եկած ճի իշխանութեան որոշճաճբ, այն է՝ եւրոպայի:

Երկրորդ՝ որպէսզի Հնարաւոր լինի Էւրոպական ընդհանուր բացալաւուծի առաջն առնել և թոյլ չտալ որ այդ երկիրը բաժան բաժան լինի և զօրեղ Հարեւանների կերը գառնայ, ի վնաս ընդհանուր հաւասարակշռութեան, հարկաւոր է զարգանալու, յառաջադիմելու, քաղաքական ճանաւոր պայճաններ տալ, ի նքն ավարու թեան ձեւով, սեպհական և պատճական կեանք ու անհատականութիւն ունեցող քաղաքական տարրերին, — այսինքն այն ազգութիւններին, որոնք արդէն վերակազմութեան և զարթնուծի ձէջ են ծաել և իրենց կենսականութեան յայտնի ապացոյցներն են տալիս, և այդ նրա համար որ հետզհետէ սեղմուող, կրճատուող, յետ քաշուող՝ այսօրուան Թիւրքիայի տեղը, ժամանակով, երեւան գան փոքրիկ նոր պետութիւնն էր, տերրիտորիական նոր բաժանումներով, ու այդպիսով վերջնականապէս Արեւելքը բոլոր Արեւելքայիներին պատկանի և վերջ դրուի Արեւելեան Խնդրի ճղճաւանջին :

Երրորդ՝ թրքական բունապետութիւնը ըստ կարելոյն անվնաս դարձնելու՝ նուաճուող ազգութիւններին խորտակելու և Էւրոպական կապիտալիստների այդ երկրում ունեցած շահերը վտանգելու տեսակէտից՝ հաստատել Ֆինանսական համատիրապետութիւն (condominium) և այդպիսով Թիւրքիայի վարչական ամբողջ զեկը առնել վեց Մեծ Պետութեանց ձեռքը : Այս առաջարկը, որ պատճութեան ընթացքում եղել է ձի քանի անգամ, վերառաջարկուեց 1897-ին Փրանսիայի կողմից, բայց Ռուսիան չհամաձայնեց, թէև որպէս նախագիծ դեռ դիւանագիտական գլրոցի ձէջը կայ :

Նորագոյն այս եզրակացութիւնների կողքին, — որ ըստ էութեան նախկինների վերակրկնութիւնն է — դեռ գոյութիւն ունի այն ձինը, որի նպատակն էր, նախ, ընդհանուր համաձայնութիւն կայացնել և ապա Թիւրքիան բաժանել վեց Մեծ և Բալքանեան փոքր պետութիւնների ճիշև, և դրա համար էլ նրանցից ամէն ձէկը ո՛չինչ չի խնայում իրեն ապագայ հասանելիքի գումարը և շրջանը և՛ս աւելի ընդարձակելու, — այս նկատմամբ, այժմս, որպէս նորագոյն ազգակ Արեւելեան Խնդրի, ճանաւոր ջանքերի ձէջ է Գերմանիան, ճիւններինը արդէն ահագին չափերի հասած լինելով, թէև նրանք էլ չեն դադարում Թիւրքիայում



իրենց ունեցած քաղաքացիութեան իրաւունքը (droit de cité) և՛ ս աւելի զգալի և անվիճելի դարձնելու խաղաղ թափանցուծի նորանոր նուաճումներով :

Փաստերը, պատմական անցքերը, այս բոլորից յետոյ, ուրեմն, գալիս են կուռ կերպով Հաստատելու, որ դեռ այսօր էլ Թիւրքիայի նկատմամբ գոյութիւն ունին այն բոլոր արտաքին և ներքին դժուարութիւններն ու խնդիրները, որոնք գոյութեան սկիզբն էին առել դեռ 17-րդ դարու վերջերից՝ այսինքն այն օրից, երբ Թիւրքիան Հարկադրուեցաւ պաշտպանողական զիւրքի ճէջ ճանկերու և երբ իրեն ժառանգութեան խնդիրը բացուեց: Կատարուած իրողութիւնները ցոյց են տալիս ճիւղաճաճայն և՛ այն՝ թէ ճազած խնդիրները ի՛նչ ուղղութեամբ են վճռուում :

## XII

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Մինչև այստեղ եղած պատմական վերլուծումներից երևաց, որ 1783-ից ձինչև այսօր գոյութիւն ունի ԱՐԵՒԷ-ԼԵԱՆ ԽՆԴԻՐ, որ ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ Թիւրքիայի գոյութեան, ո՛չ գոյութեան և նրա ժառանգութիւնը որոնց ընկնելու խնդիրը: Այդ Հարցը ՄԻՋԱԶԳԱՅԻՆ է և ճիշտագոյն օրէն էլ աստիճանաբար վճռուել է, իսկ թէ այդ վճիռը ձինչև ո՛ւր կհասնի,— գա ապագայի Հարց է. ձենք ձիւցն ցոյց տուեցինք յարուցուած խնդիրների ընաւորութիւնը, ուղղութիւնը, վճռուելու եղանակները և " Երիտասարդ Թիւրքիայ " ի դրանց նկատմամբ բռնած զիւրքը՝ սկսած երեսնական թուականներից:

Թիւրքիայի գոյութեան և ո՛չ գոյութեան խնդիրը ճիշտագոյնական լինելով, ՄԻՋԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ ընաւորութիւն են ունեցել նաև՝ այն բոլոր Քաղաքական Խնդիրները, որոնք զանազան ժամանակներում յուզուել են այդ պետութեան սահմանների ճէջ:

Միջազգայնօրէն է վճռուել Սերբիայի, Յունաստանի, Ռումանիայի, Եգիպտոսի և Բուլղարիայի անջատումը: Միջազգային ընդհանուր Հաւանութեամբ և որոշմամբ է Հաստատուել Լիբանանի և Կրետէի ինքնավարութիւնը և Սաճոս կղզու ճասնաւոր Սահմանադրութիւնը:

Միջազգային Համաձայնութեամբ են անցել՝ Աւստրո-Հուն-գարիայի, Ռուսիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Չեքոսլովակիայի ձեռքն անցնող Հողի այն տարածութիւնները, որոնք երբեմն պատկանում էին Թիւրքիային:

Սան-Ստեֆանոյի, Կիպրոսի և Բերլինի Դաշնադրութիւններով ու Մայիս 11-ի (1895) Ծրագրով՝ Հայկական Խընդիրը ձեռնարկուեցին Հիմունքներ է ընդունել. նա աւարդէն Միջազգային խնդիր է և ո՛չ թէ Թիւրքիայի ներքին ձեռնարկը:

Հայկական շարժումները ճինհետեւ ցարդ ունեցել են այն ուղղութիւնը, որպիսի ուղղութիւն որ բողոքող և շարժման ձեջ մանող ազգութիւնների համար արտադրել է Թուրք պետութեան անցեալը և Արեւելեան Խնդրի պատմութիւնը՝ համանման խնդիրների առթիւ:

Հայկական Խնդիրը Արեւելեան Խնդրի ազգակներից ձեռն է, նա ամբողջութեան ձեռն օղակն է կազմում:

Պատմական խնդիրների ուղղութիւնը և ընթացքը անհամանման կամքից կախումն չունի, ինչքան էլ որ նրանք զօրեղ և հանճարեղ լինեն:

Եւ երբ "Երևասարդ Թիւրքիա"ն ուզում է Արեւելեան Խնդիրը տեսնել վճռուած Թիւրքիայի ձեջ եղող բոլոր ժողովրդների համադրճակցութեամբ, ձենք մասնանիշում ենք պատմութիւնը, իրականութիւնը և ասում, որ այդ համադրճակցութիւնը կարող է յառաջանալ ձեայն այն պարագային, երբ Թիւրքիայի բաղկացուցիչ բոլոր ժողովրդների կատարեալ ԻնճնԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՆՈՒՆՓԸ և ընդհանուր Թիւրքիայի Ռամկավարական Սահմանադրութիւնը կընդունուի որպէս սկզբունք՝ Թիւրքիայի ձեջ եղող բոլոր ժողովրդների և կուսակցութիւնների կողմից ու յեղափոխական պայքարը, յեղափոխական գործունէութիւնը այդ ուղղութեամբ առաջ կերթայ:

Հակառակ պարագային՝ ամէն ժողովուրդ իր Դատի Հիմունքների վրան պիտի կանգնի, որպէս պատմական անհրճաճեշտութիւն և պիտի երթայ այն ուղիով, ինչոր պատմութիւնը արդէն գծել է:



